

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ
ՊՐՈՊԱԳԱՆԴԸ
ՆԵՐԿԱ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ


ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ 1938

30 JAN 2018

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆՓ

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ
ՊՐՈՊԱԳԱՆԴԸ
ՆԵՐԿԱ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



ՀԱՅԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԸ
ՆԵՐԿԱ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԺՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵՎԱՆ 1938

ՅԵԿԵԳԼԵՅԻՆ ՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ստալինյան Սահմանադրութեան քննարկմանը և
 ուսումնասիրմանը նվիրված աշխատավորութեան ժողովներում հաճախ հարց է դրվում. կարո՞ղ են արդ-
 դյոք կրոնական ընկերութիւններն աշխատավորների
 խորհուրդների ընտրութիւնների ժամանակ իրենց
 թեկնածուներն առաջադրել: Շատ կրոնական ընկերու-
 թիւններ հավատացյալներին ըստ իրենց են պարզա-
 բանում խորհրդային Սահմանադրութիւնը, հայտնե-
 րով նրանց, վոր կրոնական ընկերութիւններն, իբր
 թե աշխատավորութեան մյուս կազմակերպութիւննե-
 րին հավասար ոգտվում են այդ իրավունքից: Վորոշ
 տեղերում կրոնական ընկերութիւնները փորձում են
 մինչև անգամ «հանձնարարական ցուցակներ» կազմել
 խորհուրդների ընտրութիւնների համար: Որջոնիկի-
 ձեյի յերկրի Ապոնասենկովսկի չրջանի Վոզնեսենովսկ
 դյուղում աղանդավորներն սկսել են տարածել իրենց
 մարդկանց «հանձնարարական ցուցակները» խորհուրդ-
 ների ընտրութիւնների համար: Հարավային Ղազա-
 խստանում, Սայրամսկի չրջանում, նացիոնալիստներն
 ու մոլլաները նույնպես ակտիվորեն պատրաստվում են
 խորհուրդների ընտրութիւններին, կազմում են իրենց
 թեկնածուների ցուցակները: Պաշտամունքի սպասա-
 վորները դեմ չեն նաև Գերագույն Խորհրդի համար
 իրենց թեկնածուներն առաջադրելու:

Վորպեսզի կարելի լինի վերելում արված հարցին



11-28 12091

պատասխանել, հարկավոր ե սկզբից հիշեցնել խորհրդային իշխանության հիմնական դեկրետը՝ յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց անջատելու մասին, վոր հրատարակված ե 1918 թ. հունվարի 23-ին: Այդ դեկրետում ասված ե, թե խորհրդային պետության սահմաններում «արգելվում ե հրատարակել տեղական վորևե որեւքներ կամ վորոշումներ, վորոնք կսեղմեն կամ կսահմանափակեն խղճի ազատությունը կամ թե քաղաքացիների հավատադավանական պատկանելիության հիման վրա վորևե առավելություն կամ արտոնություն կսահմանեն»:

Լենինի-Ստալինի կուսակցությունը հեղափոխության առաջին որերից կենսագործեց իր ծրագիրը, վորը նա մշակել եր դեռ առաջին ուսական հեղափոխության շրջանում, ցարիզմի դեմ պայքարելու ժամանակ: Նա բոլոր քաղաքացիներին ապահովեց խղճի ազատությամբ: Դեկրետը սահմանեց, վոր «յուրաքանչյուր քաղաքացի կարող ե դավանել իր ցանկացած կրոնը կամ վոչ մեկը չդավանել»: «Ամեն տեսակի իրավագրկությունները, վորոնք կապված են վորևե հավատքի դավանության հետ կամ վոչ մի հավատք չդավանելու հետ, վերացվում են»: (Յ կ.):

Այս հիմնական դեկրետով, վորն ուժի մեջ ե և այսօր, կրոնական ընկերությունները մասնավոր ընկերություններ են ճանաչված, ընդվորում այլ մասնավոր ընկերություններից տարբերելու համար համաձայն այդ դեկրետի «վոչ մի յեկեղեցական ու կրոնական ընկերություն սեփականություն ունենալու իրավունք չունի, նա իրավաբանական անձի իրավունքներ չունի»: (հոդ. 12):

Այսպիսով կրոնական ընկերությունների գործունեությունը սահմանափակված ե: Հետագա խորհրդային որենսդրությունն ել ավելի ճշգրտեց այդ դեկրետը: 1929 թ. ապրիլի 8-ի որենքի համաձայն «կրոնական միավորություններին արգելվում ե.

ա) փոխադարձ ոգնության դրամարկղներ, կոո-

պերատիվներ, արտադրական միավորություններ բուտեղծել և առհասարակ իրենց տրամադրության տակ գտնվող գույքն ոգտագործել ինչ վոր այլ նպատակների համար, բացի կրոնական կարիքներ բավարարելուց:

բ) իրենց անդամներին նյութական ոգնություն ցույց տալ:

գ) Ինչպես հատկապես մանկական, պատանեկական, կանացի աղոթքի և այլ ժողովներ, նույնպես և ընդհանուր ավետարանական, գրական, ձեռագործային, աշխատանքային, կրոնի ուսուցման և նման ժողովներ, խմբեր, խմբակներ, բաժիններ կազմակերպել, ինչպես նաև եքսկուրսիաներ ու մանկական հրապարակներ, սանատորիաներ ու բուժման ոգնություն կազմակերպել, գրադարաններ և ընթերցարաններ բացել: Աղոթատներում և աղոթքի վայրերում միայն այն գրքերը կարող են պահվել, վորոնք անհրաժեշտ են տվյալ պաշտամունքի կատարման համար»: (հոդ. 17):

Պարզ ե, վոր խորհրդային որենսդրությունը կըրոնական ընկերությունները չի հավասարեցնում աշխատավորության այլ ընկերություններին, նրանց չի համեմատում աշխատավորությանն ոգտավետ կազմակերպությունների հետ:

Այդպես յերեք չի յեղել, չե և չի լինի: Խորհրդային որենսդրությունը կրոնական ընկերությունների գործունեությունը սահմանափակում ե միայն կրոնական սրաշտամունքի կատարմամբ և այդ ընկերություններին թույլ չի տալիս վոչ մի այլ գործունեություն մը զբաղվել:

Ի դարդացումն 1929 թ. հոկտեմբերի 1-ի որենքի հրատարակված հատուկ հրահանգը ճշտորեն ձևակերպեց կրոնական ընկերությունների նպատակը, վորոնց մեջ մարդիկ կարող են միանալ միայն «կրոնական կարիքների համատեղ բավարարման համար»: (հոդ. 1):

Ստալինյան Սահմանադրությունը վորևե բան փոփոխե՞լ ե այդ հարցում:

Նոր Սահմանադրության 124-րդ հոդվածում ասված է. «Քաղաքացիների համար խղճի ազատությունն ապահովելու նպատակով յեկեղեցին ԽՍՀՄ-ում բաժանված է պետութունից և դպրոցը յեկեղեցուց: Կրօնական պաշտամունքների կատարման ազատությունը և հակակրօնական պրոպագանդայի ազատությունը ճանաչվում է բոլոր քաղաքացիների նկատմամբ»:

Անհրաժեշտ է մատնանշել, Վոր Սահմանադրությունը մի եյական փոփոխություն է մտցրել պաշտամունքների սպասավորների հանդեպ վերաբերմունքի հարցում: Սահմանադրությունը նրանց նկատմամբ, ինչպես և յերկրի բոլոր քաղաքացիների նկատմամբ, աշխատավորական խորհուրդներ ընտրելու և դրանցում ընտրվելու իրավունք է ճանաչում: Պաշտամունքի սպասավորները մինչև այժմ այդ իրավունքը չունեին: Վորոչ տեղերում պաշտամունքի սպասավորներն այժմ իրենց ընտրական իրավունքներ տալը «բացատրում են» նրանով, Վոր խորհրդային իշխանությունը, Վորպես թե, համոզվեց յեկեղեցու և կրոնի անհրաժեշտության մեջ: Մոսկվայի մոտերքում, Ուխտովսկի շրջանի Կոտելնիկի դուղում, տերտերն ու յեկեղեցական ավագը հավատացյալներին «բացատրում» են, թե «աստված բոլշևիկներին խելքի բերեց, նրանք հիմա ուզքի յեն յեկել, ուրեմն և պատրաստվենք Խորհուրդներ ընտրություններին և ընտրենք մեր հավատացյալ մարդկանց»:

Խորհրդային իշխանությունն այդ փոփոխությունը մտցրեց Վոչ այն պատճառով, Վոր մեզ մօտ սկզբունքորեն փոխվել է վերաբերմունքը դեպի կրոնը կամ յեկեղեցին: Ամրացած խորհրդային իշխանությունը, ինչպես այդ մատնանշեց ընկ. ՍՏԱԼԻՆԸ— «անպարտելի ուժի յե վերածվել» և միայն պաշտամունքի սպասավորների համար չէ, Վոր վերացրեց ընտրական իրավունքների սահմանափակումները, Վորոնք «մտքած էին ժամանակավոր կերպով մինչև Վորոչ շրջան»:

Սակայն այլ բան է պաշտամունքի սպասավորներին,

ինչպես և մյուս քաղաքացիներին ընտրական իրավունքներ տալը, և այլ բան է կրոնական ընկերություններին աշխատավորության խորհուրդների թեկնածուներ առաջադրելու իրավունք տալը: Դա կնշանակեր յեկեղեցին պետությունից բաժանելու մասին խորհրդային որենքը խախտել:

Յեկեղեցին չունի և չպետք է ունենա Վոչ մի դործ պետության ղեկավարության կազմակերպման, պետական իշխանության կազմակերպման խնդիրներում:

Յեկեղեցին չի կարելի հավասարեցնել Վոչ արհմիություններին, Վոչ գիտական—լուսավորական և աշխատավորությանն ոգտակար այլ կազմակերպություններին: Պաշտամունքի սպասավորները, չնայած, Վոր ընտրական իրավունքներ են ստացել, սակայն առաջվա պես շարունակում են պահպանել ու տարածել հայացքներ ու հասկացողություններ, Վորոնք թշնամական ու հակադիր են գիտությանը:

Յերբեմն հարց են տալիս. ինչպե՞ս վարվել, յեթե այս կամ այն ընտրական ոկրուղում իշխանության որգանների մեջ առաջադրված կլինի տերտեր:

Այս հարցին կարելի յեր տալ հասարակ պատասխան— քվե չտալ այդպիսի թեկնածույին: Սակայն այս պատասխանը բավական չէ: Պետք է աշխատել այն բանի վրա, Վորպեսզի աշխատավորության նույնիսկ առանձին խմբեր, Վորոնք դեռ կրոնական ծեսեր են պահպանում, չառաջադրեն այն մարդկանց թեկնածությունները, Վորոնք իրենց համար արհեստ են ընտրել հակադիտական հայացքներ տարածելը, Վորոնք զբաղվում են «Ժողովրդի ոպիումի»— կրոնի տարածմամբ, Վորին ԼԵՆԻՆԸ յուրատեսակ հոգեվոր ողի յեր անվանում: Կուսակցական կազմակերպությունների և խորհուրդների խնդիրն, իմիջի այլոց, կայանում է և նրանում, Վոր լայնորեն և սիստեմատիկաբար հակակրոնական պրոպագանդա մղեն՝ այդ նպատակի համար կազմակերպելով աշխատավորության լայն շրջանները,

վորոնք արդեն վերջնականապես և ընդմիշտ խզել են իրենց կապերը կրոնական բթացումից:

Չափազանց վտանգավոր կլինե՞ր մոռանալ, վոր մեր յերկրի աշխատավոր բնակչության զգալի մասում կրոնական մնացորդները դեռ համեմատաբար ուժեղ են: ԽՍՀՄ-ում գոյություն ունեն մոտ 30.000 կրոնական համայնքներ, վորոնք ռեակցիոն տարրերի ազդեցության ու ղեկավարության տակն են գտնվում: Չբացառելով մոռանալ, վոր միլիոնավոր գյուղացիներ ու բանվորներ մի մասը դեռ կրոնական ծեսեր են պահպանում:

Դրա հետ միասին պետք է հիշել, վոր վերջին ժամանակներս կրոնական կազմակերպություններն զգալիորեն ուժեղացրել են իրենց գործունեությունը: Ներքանք փորձում են ողտազործել խորհրդային դեմոկրատիայի լայնացումը, վորպեսզի ամրացնեն իրենց դիրքերը, ուժեղացնեն իրենց ռեակցիոն ազդեցությունը աշխատավորության հետամնաց շերտերի վրա:

Տեղ-տեղ քաղաքներում ու գյուղերում աղանդավորներն ոգտվելով խորհրդային ու կուսակցական կազմակերպությունների անուղղորդությունից՝ տնային աղանդավորական «ակումբներ» եյին բացել: Կազմակերպելով իրենց այդ «ակումբները»՝ աղանդավորները ձգտում եյին վիժեցնել խորհրդային ակումբների ազդեցությունը: Որինակ, Սիբիրական Ստարայա Զիմա գյուղում «չարաթականների» (սուբբոտնիկների) աղանդի ազդեցության տակ գյուղխորհրդի նախագահ Գոտոպովը խրճիթվարին կրճատել է աշխատանքից ու փակել գյուղի միակ ակումբը, վորպես թե միջոցների բացակայության պատճառով: Աղանդավորները զբաղեցնում ոգտվելով՝ աղանդները ներգրավեցին 60-ից ավելի պատանիների ու աղջիկների:

Սխտեմատիկ հակակրոնական պրոպագանդան անհրաժեշտ է մեզ և այն ել հենց հիմա, ընտրություններին պատրաստվելու շրջանում:

Հարկավոր է հիշել ընկ. ՍՏԱՆԻՆԻ խոսքերը. «Յե-

թե ժողովուրդը տեղ-տեղ թշնամի մարդիկ ընտրի յեւ, ապա այդ կնշանակի, վոր մեր ազիտացիոն աշխատանքը չափից դուրս վատ է դրված, և վոր մենք լիովին արժանի եյինք այդպիսի խայտառակության, իսկ յեթե մեր ազիտացիոն աշխատանքը բոլշևիկորեն ընթանա, ապա ժողովուրդը չի թողնի, վոր իր գերագույն մարմինները թշնամի մարդիկ մտնեն: Նշանակում է՝ հարկավոր է աշխատել և վոչ թե նվնվալ, հարկավոր է աշխատել և վոչ թե սպասել նրան, վոր ամեն ինչ տրամադրվի պատրաստի վիճակում, վարչական կարգադրությունների կարգով»:

Կրոնական պաշտամունքների սպասավորներին ընտրական իրավունքներ տալու և պաշտամունքների կատարման ազատությունն ապահովելու հարցում կա մի սկզբունքային կողմ, վորը պետք է պարզաբանել աշխատավորության լայն մասսաներին: Մարքսի-Ենգելսի-Լենինի-Ստալինի կոմունիստական ուսմունքի կողմնակիցներն այս հարցումն էլ տարբերվում են բուրժուական ազատամիտներից ու անարխիստներից: Առաջին՝ ինչպես դրա վրա միշտ մատնանշել է Լենին-ՆԸ և մատնանշում է Համ. Կ(բ)Կ ծրագիրը, լիբերալ բուրժուազիան թեպետ և հայտարարել է խղճի ազատություն և յեկեղեցու բաժանումը պետությունից ու դպրոցը՝ յեկեղեցուց, սակայն վոչ մի տեղ այդ սկզբունքները մինչև վերջը չի հասցրել: Խորհրդային իշխանությունն այդ սկզբունքն անցկացրեց մինչև վերջ: Յերկրորդ՝ կոմունիստական կուսակցության կողմնակիցները վոչ մի ընդհանուր բան չունեն անարխիստների վոչ սկզբունքների, վոչ տակտիկայի հետ, վորոնք պահանջում են կրոնի վերացում, պաշտամունքների վերացում:

Մարքսը և Ենգելսը միշտ ծաղրել են անարխիստներին (Բակունինին), վորոնք իրենց ծրագրում ցուցադրում եյին պաշտամունքի վերացման, կրոնի վերացման պահանջը:

Այն տիպի հակակրոնական պրոպագանդան, ինչ-

պիսին անարխիստ Հոհանն Մոստի պրոպագանդան եր, ամէլի շատ վնաս բերեց ու կրէրի, քան թե ոգուտ:

Դրա հետ միասին Մարքսն ու Ենգելսը մեծ դուժա- սանքով են խոսում Փարիզյան Կոմունայի ձեռնար- կումների մասին, վորը 1871 թվի ապրիլի 2-ի դեկրե- տով յեկեղեցին բաժանեց պետութունից:

Արժե նշել, վոր տրոցկիստներն Իսպանիայում այդ հարցում պրովոկատորական անարխիստական ծայրա- հեղութուններ են պաշտպանում: Նրանք խստորեն հարձակվում են Իսպանական հանրապետական կառա- վարության վրա, վորն ապահովել է կրոնական պաշ- տամունքների կատարման ազատութունը: Տրոցկիստ- ները կուզենային դժտություն գցել Իսպանիայի հավա- տացյալ աշխատավորների և հանրապետական կառա- վարության մեջ և դրա համար ել գործում են վորպես իսկական պրովոկատորներ ու ժողովրդի դավաճան- ներ՝ անարխիստների հետ միասին պահանջելով պաշ- տամունքի վերացում և արգելում:

Կոմունիստները կրոնը չարիք են համարում, վորի դեմ պայքարում են համոզելու միջոցով, պրոպագան- զայի միջոցով: Կոմունիստներն իրենց հակակրոնա- կան աշխատանքի փորձից դիտեն, վոր տասնյակ մի- լիոնավոր աշխատավորներ իրենց կապերն արդեն խը- զել են կրոնից, տասնյակ միլիոնավոր աշխատավորներ այդ ուղու վրա յեն գտնվում: Կոմունիստներն իրենց հակակրոնական և կուլտուրական— լուսավորական պրոպագանդայով, իրենց ամբողջ գործունեյությամբ համբերատարությամբ ոգնում են աշխատավորներին՝ հաղթահարելու անցյալի մնացորդը, աշխարհի զիտա- կան ըմբռնմանը խորթ դադափարախոսությունը, խղե- լու իրենց կապերը անդրգրեզմանյան կյանքի, աստ- վածների, աստվածոճիների, սրբերի, հրեշտակնե- րի, սատանաների, դրախտի և դժոխքի վերաբերյալ խաբուսիկ— պատրանքային հավատալիքներից: Բոլ- շեվիկներն ոգնում են աշխատավորությանն այստեղ, յերկրի վրա, բոլորի համար ուրախալի, յերջանիկ

կյանք կառուցելու: Կոմունիստները դեմ են այն բա- նին, վոր մեկն ու մեկին ստիպեն հավատալ կամ չհա- վատալ: Սակայն, թույլատրելով կրոնական կազմա- կերպությունների գոյությունը պաշտամունքի կատար- ման համար, կոմունիստները մեծ սխալ կատարած կը- լինեյին, յեթե թույլ տային կրոնական կազմակերպու- թուններին դուրս գալու այն շրջանակներից, վոր խոր- հրդային որենսդրությամբ հատկացված են նրանց, խախտելու խորհրդային Սահմանադրությունն ու վե- րածվելու քաղաքական կազմակերպությունների, վո- րոնք իրենց թեկնածուներն են առաջադրում աշխատա- վորութան խորհուրդներում: Դա կնշանակեր, վոր կը- րոնական ընկերությունները հավաքում են հավատաց- յալներին վոչ միայն աղթքի համար, այլև քաղաքա- կանապես կազմակերպում են նրանց:

Ամուր պաշտպանելով խորհրդային պետության Ստալինյան Սահմանադրությունը, վորն ամբողջ աշ- խատավորութան համար ապահովում է խղճի ազատու- թյուն, կրոնական պաշտամունքների ազատ կատարում, պաշտպանելով յուրաքանչյուր խորհրդային քաղաքա- ցու իրավունքները՝ ընտրելու աշխատավորության խորհուրդներ և ընտրվելու՝ անկախ կրոնի հանդեպ ունեցած իր վերաբերմունքից: Պայքարելով համոզ- ման մեթոդները վարչարարական մեթոդներով փոխա- րինելու փորձերի դեմ, մենք պետք է նույնչափ հաս- տատապես ու վճռարար պայքարենք ժողովրդի ու կու- սակցության համար թշնամական հանդիսացող ամեն տեսակի փորձերի դեմ, վորոնց նպատակն է կրոնական ընկերություններն ընտրական կամպանիային մասնա- կից դարձնել:

Այդպիսի ամեն մի փորձ, մենք իրավունք ունենք դիտելու վորպես յեկեղեցին պետությունից բաժանելու մասին խորհրդային որենսդրության խախտում:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՀԱԿԱՐՈՆԱԿԱՆ ՓՐՈՆՏՈՒՄ

Հակակրոնական աշխատանքի բավական յերկարատեվ և լուրջ անդորրությունից հետո, անկասկած մեզ մոտ վորոշ աշխուժություն է նկատվում, բայց յես չեյի ասի վոր արդեն այնպիսի աշխուժություն է սկըսվել, վորպիսին համապատասխանում է ներկա մոմենտի պահանջներին ու խնդիրներին: ԽՍՀՄ-ում խորհրդային իշխանության դոյության քսան տարվա ընթացքում հակակրոնական պրոպագանդայի բնագավառում հակայական հաջողություններ են ձեռք բերված: Սխալ կլինեք այդ հաջողությունները բացասել:

Չնայած այն բանին, վոր կրոնական նախապաշարմունքները դարերի ընթացքում մասսաների գիտակցության մեջ եյին մտցվում, հարյուր հազարավոր բանվորներ ու գյուղացիներ հեռացել են կրոնից, վորպես մասսաներին թշնամի գաղափարախոսությունից: Մոտիկ անցյալում Պիոս 11-րդ պապն իր կոնգակներից մեկում գրել էր այն մասին, թե աթեիստներ առաջներում ել յեղել են, սակայն առաջներում նրանք հատ ու կենտ եյին: Այժմ այն գիտակցությունը, վոր աստված չկա, վոր աստված առասպել է, միլիոնավոր մասսանե-

րի յե ընդգրկել բոլոր յերկրներում: Անաստվածական այդ մեծ շարժման առաջնորդը բանվոր դասակարգն է, վորը բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ այդ ուղիով տանում է իր հետևից աշխատավորության, գյուղացիության և ինտելիգենցիայի լայն մասսաները:

Ինչո՞ւմն է արտահայտվում անաստվածության այդ աճը ԽՍՀՄ-ում: Միլիոնավոր մասսաներն առաջին անգամ խզեցին կապերը յեկեղեցուց ու կրոնից: Իհարկե խզումը յեկեղեցուց ու կրոնից իր խորությամբ, ամբողջությամբ ու պարզորոշությամբ միևնույնը չի հավատացյալների զանազան խմբերի մոտ, վոմանք լիովին են խզել կապերը կրոնից, մյուսները յեկեղեցիներ չեն հաճախում, կրոնական վոչ մի ծես չեն կատարում, իսկ վոմանք ել միայն սրբապատկերներն են իջեցրել պատերից:

Կրոնի հետ կապերը խզածների մեջ քիչ չեն այնպիսի մարդիկ, վորոնք արդեն լուրջ մատելիալիստական, աթեիստական աշխարհայացք են մշակել:

Այդպիսի անաստվածների թիվը մեզ մոտ, յեթե հաշվելու լինենք կոմունիստներին, կոմյերիտականներին, կոլտնտեսականներին առաջավոր ակտիվը, բանվորներին — 10-ը միլիոնից պակաս չէ: Մեր հակակրոնական մասսայական կազմակերպությունը — Մարտնչող անաստվածների միությունը 1936 թվին 5 միլիոն անգամ ուներ: Ավելի լայն մասսաներում մենք կրոնից վոչ լրիվ անջատում ենք տեսնում: Դրանք այն մարդիկ են, վորոնք վորոշ չափով խզել են կապերը կրոնից, վորոշ չափով ել կրոնական արարողություններից, բայց դեռևս կանգնած են կարծես ճամբարաժանի վրա: Դրանցից շատերը թեև հավաքել են սրբապատկերները, բայց պահում են անդուկներում, դեռ ափսոսում են բաժանվել այն բանից, վորին հարյուրավոր տարիների ընթացքում յերկրպագել են իրենց պապերը, հայրերը, դրանք այնպես են պահվում, ինչպես տատիկի թասակն է պահվում անդուկում:

Այնուամենայնիվ կրոնական դադարաբախտությանը հսկայական հարված է հասցված:

Մարդկության պատմության մեջ առաջին անգամն է, վոր մարդկանց այդպիսի մեծ մասսաներ խզել են կապերն ու խզում են յեկեղեցուց և կրոնից: Սակայն կարիք չկա նաև կրոնի դեմ մղվող պայքարի հաջողությունները գերադնահատել. պետք է ի նկատի ունենալ, վոր, չնայած անկրոնության հսկայական հաջողություններին, յերկրում տասնյակ միլիոնավոր մարդիկ կան, վորոնք դեռևս կրոնից կապերը չեն խզել: Թե ինչ չափով է մեծ այդպիսիների թիվը, այդ իհարկե մարդահամարը ցույց կտա, վորի արդյունքները մենք դեռ չգիտենք: Այս հանգամանքը հաշվի չառնել, չտեսնել, դա վտանգավոր սխալ կլինի: Յեթե անգամ պարզվի, վոր չափահաս ազգաբնակչության միայն $\frac{1}{3}$ -ը հավատացյալներ են, ապա դա նշանակում է, թե մեր առջև դեռ մեծ աշխատանք կա կատարելու:

Վերջին մարդահամարը կատարվել է Ռուսաստանում մինչև հեղափոխութունը— 1897 թվին: Չափազանց հետաքրքիր է համեմատել այդ մարդահամարի տվյալները նրա հետ, ինչ այժմ մենք ունենք մեր յերկրում: Ռուսաստանում 1897 թվին ամեն տեսակի ու պաշտամունքի հոգեվորականների թիվը (սուրբ ընտանիքի անդամների)— 295 հազար մարդու յեր հավասար, մինչդեռ Ռուսաստանում այդ ժամանակ 79 հազար ուսուցիչ կար: Այս յերկու թվերը բնորոշում են դրությունը ցարական Ռուսաստանում— 79 հազար ուսուցիչ և 295 հազար տերտեր: Յեթե ուսուցիչներին այդ քանակին ավելացնենք ինժինեյրների, բժիշկների, գյուղատնտեսների ու զինականների թիվը, բոլորին միասին հաշվելու դեպքում անգամ տերտերների թվից քիչ թիվ կստացվի:

Հեղափոխության որոք ինչպիսի՞ փոփոխություններ են առաջացել այդ բնագավառում: Յեռ ստույգ տվյալներ չունենք պաշտամունքի սպասավորների այսորվա քանակի մասին, բայց 1926 թվին, պաշտամունք

քի 79.300 սպասավոր էր պաշտոնապես հաշվառման յենթարկված, այսինքն, հեղափոխության առաջին 9 տարվա ընթացքում պաշտամունքի սպասավորների քանակը 1897 թվի համեմատությամբ կրճատվել է մոտավորապես 4 անգամ: Այդ առթիվ Դոնբասի «Կաշեգարկա» թերթը գրում էր.— 295 հազար տերտերներ ու վարդապետներ, մոտ 13 հազար կախարդներ, 138 հազար զինեյրների, գիշերոթեմանների ու հասարակաց տների տերեր, 10 հազար պոռնիկներ, միլիոնավոր զործազուրկներ ու գրեթե 90% անգրագետներ— ահա ցարական մարդահամարի հանրագումարը: Յեվ միևնույն ժամանակ իՍՍՀՄ-ում 1926 թվին կային միայն 410 հազար ինժինեյրներ ու տեխնիկներ, մինչդեռ 1935 թվի վերջին սոսկ միայն խոշոր արդյունաբերության մեջ 509 հազար ինժինեյրներ ու տեխնիկներ կային, իսկ ներկայումս մեր յերկրում մի քանի անգամ ավելի շատ ինժինեյրներ ու տեխնիկներ կան, քան հեղափոխությունից առաջ: Շատ հետաքրքրական են 1897 թվի Մոսկվայի մարդահամարի տվյալները: Մոսկվայում, իր շրջակայքի հետ միասին, 1897 թվին 7638 տերտեր ու վարդապետներ կային, իսկ ուսուցիչներ՝ միայն 1837 մարդ: Կային 374 ինժինեյրներ, 1380 բժիշկներ, վորոնց թվում 35 բժկուհիներ: Մարդահամարի ժամանակ հասարակաց տների տերերն առանձնացված էյին, վորպես ինքնուրույն պրոֆեսիա, նրանցից 301 մարդ է արձանագրված: Յեվ միևնույն ժամանակ Մոսկվայում միայն 779 հոգի սովորող թուչակառուներ կային:

Բոլորովին այլ է դարձել Մոսկվան հեղափոխությունից հետո: Ըստ 1926 թվի մարդահամարի Մոսկվայում կային 943 պաշտամունքի սպասավորներ (7638-ի փոխարեն), ուսուցիչներ՝ 12.519 (1837-ի փոխարեն), բժիշկներ՝ 6643 (1480-ի փոխարեն), ինժինեյրներ՝ 8057 (374-ի փոխարեն) սովորող թուչակառուներ՝ 34.926 (779-ի փոխարեն):

Ահա այն շշմեցնող փոփոխությունները, վորոնք

տեղի յեն ունեցել հեղափոխության առաջին տասը տարվա ընթացքում: Յեթե վերցնենք առ 1-ն հունվարի 1936 թվի ավյալները, կտեսնենք վոր Մոսկվայում կային 24 հազարից ավելի ուսուցիչներ, 12 հազարից ավելի բժիշկներ, վորոնց թվում կեսից ավելին կանայք, 100 հազարից ավելի ուսանող— թոշակառուներ:

Այս թվերը մեր յերկրի ամբողջ կուլտուրայի հրաշալիքն էին: Ինքնատիքյան հասկանալի յե, վոր այն փոփոխությունները, վորոնք տեղի յեն ունեցել մեր կյանքի բոլոր բնագավառներում չեյին կարող չզուգահեցվել ժողովրդի ամբողջ աշխարհայացքի հսկայական բեկումով: Նրանք չեյին կարող չարտահայտվել մարդկանց գիտակցության խորագույն փոփոխությունների մեջ, նրանց հասկացողությունների, սովորությունների մեջ: Այդ փոփոխություններն առաջ բերին մարդկանց նոր գաղափարախոսության մշակում, նոր վերաբերմունք դեպի աշխատանքը, դեպի հասարակական սեփականությունը, վորպես սոցիալիստական պետության քաղաքացիներ դեպի իրենց պարտականությունները, նոր բարոյականություն— բարոյականություն, վորն իր արդարացման համար վոչ մի աստծու, վոչ մի սրբի կարիք չի գտնում:

Թե վորչափ է մեծ անաստվածների թիվը մեր յերկրում, մենք ասել չենք կարող: Այդ ցույց կտա մարդահամարը: Բայց անաստվածների կազմակերպությունն իր աշխատանքում չատ ուժեղ կերպով հետ է մնում: Նա այժմ այն մասսայական կազմակերպությունը չի հանդիսանում, վորը մենք կարող ենք և պետք է ունենանք: Մենք այն տեսակետին չենք կանգնած, թե բոլոր անաստվածներն անպայման պետք է անաստվածների միության մեջ լինեն, բայց մենք կարծում ենք, վոր, համենայն դեպս, անհավատների ամբողջ մասսայի մեկ տասերորդ մասը կարող է մըտնել ՄԱՄ-ի կազմակերպության մեջ: Շատ ընկերներ մեր հաջողություններից այնպես յեզրակացրին, թե

յեթե մենք հսկայական չափով անաստվածներ ունենք, ապա ել ի՞նչ կարիք կա անհանգստանալու: Մնացած մասսան ինքն իրեն կը միանա ՄԱՄ-ին, մնացածներն իրենք իրենց անկրոնության կհանգեն, այդ բնագավառում կարիք չկա աշխատելու: Դա ինքնահանգստացման հասցրեց, հակակրոնական պրոպագանդայի թուլացում առաջ բերեց, կրոնական կազմակերպությունների գործունեյության ակտիվացումը հեշտացրեց: Կրոնական կազմակերպությունները նման արտահայտությունները գնահատում են վորպես հրաժարում հակակրոնական պրոպագանդայից, վորպես թուլության նշան: Իսկ արտասահմանյան բուրժուական մամուլն այդ այնպես է մեկնաբանում, թե իրը կոմունիստները կանգնեցին յեկեղեցու հետ հաշտվելու գծի վրա: Ծիշտ է, հնարավոր չէ մեր թշնամիների մոտ վորեւէ հետևողականություն փնտռել. «կոմունիստների կրոնի հետ հաշտվելու» հեքյաթներին կողք-կողքի, նրանք անմիջապես հայտարարում են թե՛ անաստվածների միության նախագահ Յարոսլավսկին, իրը թե, յոգունգ է արձակել — այրել բոլոր յեկեղեցիները:

Դուք բոլորդ ել գիտեք, վոր թե առաջինը և թե յերկրորդը հակախորհրդային զրպարտիչների կոպիտ ստեր են: Կոմունիզմի քաղաքական գործունեյության ասպարեզ հանդես գալու հենց սկզբից կոմունիզմի դեմ համախմբվեցին հին աշխարհի բոլոր ուժերը: Դեռ «կոմունիստական Մանիֆեստում», 1847 թվին, Մարքսը և Ենգելսը գրել են, թե կոմունիզմի ուրվականի դեմ եյին միացել հին աշխարհի բոլոր ուժերը Հռոմի պապի հետ ու նրա գլխավորությամբ: Պատմությունը նույնպես մեզ սովորեցնում է, թե չահագործող դասակարգերը միշտ յեկեղեցու վրա, կրոնական կազմակերպության վրա յեն հենված: Ստրկատերերի տիրապետությունը հին աշխարհում, ճորտատեր— կալվածատերերինը՝ միջին դարերում, հին Ռուսաստանի ճորտատիրական վոստիկանական պետությունը, ինչպես նաև այժմյան բուրժուական պետությունները՝ հիմնված եյին

ու հիմնվում են յեկեղեցու և կրօնի ոժանդակության վրա: Բաշական և հիշիլ այն պատվիրանները, վորոնք հանդիսանում են յեկեղեցական ուսմունքի անկյունաքարերը, ինչպիսիք են «աստծուց վախեցեք», «ցարին հարգեցեք» կամ «ստրուկները թող հնազանդվեն իրենց տերերին», վորպեսզի հասկանանք, թե ամեն մի կրօն վորպիսի ուսուցիչն ու գեր և խաղացել ու խաղում է:

Կապիտալիստները կառուցել էյին արտասահմանում, այժմս ել կառուցում են շատ յեկեղեցիներ: Այդ բանը նրանց համար դժվար չէր, վորովհետև նրանք կառուցում էյին աշխատավորության ամենամոտեմտ շահագործումից ձեռք բերված գումարներով ու միջոցներով: Կապիտալիստներն ամեն կերպ փորձում էյին ամրացնել կրօնական ազդեցությունը բանվորների միջև: Շատ ֆարքիկներում յեկեղեցու համար ստիպողական գանձումներ էյին կատարվում: Մինչ հեղափոխական Ռուսաստանի ֆարքիկներում տարին մի քանի անգամ մաղթանքներ էյին կատարվում: Չկար վոչ մի գարչելիութուն, վոր չորհնվեր յեկեղեցու կողմից, տերտերները մաղթանք էյին կատարում մինչև իսկ հասարակաց տան քացման ժամանակ:

Յերբ 1905 թվի հեղափոխական շարժումն սկսվեց, յեկեղեցին հեղափոխության դեմ պայքարելու համար այնպիսի հակահեղափոխական կազմակերպություններ առաջ քաշեց, ինչպիսին եր «Միքայել հրեշտակապետի միությունը»: Վանքերը վորպես ջարդային ագիտացիայի կենտրոններ էյին ծառայում: Վոլինի Պոչայեվսկի տաճարում հեղափոխության դեմ ջարդարար թուլցիկներ էյին տալվում: Հենց նրա համար, վոր յեկեղեցին ցարիզմի և կապիտալիզմի հավատարիմ հանարանն եր, մանաթիսիայի, կապիտալիստական հասարակարգի դեմ ուղղված հեղափոխական պայքարը, պետք է ուղղվեր նաև յեկեղեցու դեմ, վորն այդ հասարակարգի հիմքերից մեկն եր:

Լենինը 1905 թվի հոկտեմբերյան ապստամբու-

թյան նախորդակին հարց դրեց բանվորական կուսակցության դեպի կրօնն ունեցած վերաբերմունքի մասին: Ինչո՞ւ յեր նա այդ հարցադրումը տեղին ու ժամանակին համարում, չնայած վոր հսկայական մասսան տերտերներին եր հավատում, չնայած միայն 11 ամիս դրանից առաջ հունվարին, Պետերբուրգյան բանվորները խաչվարներով ու սրբապատկերներով Գապոն տերտերի գլխավորությամբ դեպի ցարն էյին գնում վոչ թե հեղափոխական յերգեր յերգելով, այլ կրօնական որհներգներով:

Լենինը գտնում եր, վոր դեպի կրօնն ունեցած վերաբերմունքի հարցը անհրաժեշտորեն հենց այժմ պետք եր դնել: Նա ասում եր, վոր մեզ համար, կոմունիստների համար, կրօնը մասնավոր գործ չէ, վոր նա միայն պետության համար է մասնավոր գործ հանդիսանում: Պետությունը գործ չի ունենալու քաղաքացիների կրօնական հավատքների հետ: «Ամեն մարդ միանգամայն ազատ պետք է լինի դավանելու իր ցանկացած կրօնը, կամ վոչ մի կրօն չդավանելու, այսինքն լինելու անկրօն, անաստված, ինչպես սովորաբար լինում է յուրաքանչյուր սոցիալիստ: Քաղաքացիների մեջ իրենց իրավունքների նկատմամբ միանգամայն թույլատրելի չէ վոչ մի տարբերություն կրօնական հավատալիքներից կախում ունենալու տեսակետից»:

Այն, ինչ գրել եր Լենինը կրօնի մասին 1905 թվին, որենք գարձավ Խորհրդային իշխանության կողմից 1918 թվին յեկեղեցին պետությունից բաժանելու հարցում:

Լենինը 1905 թվին խղճի ազատության համար պայքարի ծրագիր ծավալեց: Սակայն հենց այստեղ նա հայտարարեց, թե «Պրոլետարիատի սոցիալիստական կուսակցության նկատմամբ կրօնը մասնավոր գործ չէ: Մեր կուսակցությունը բանվոր դասակարգի ազատագրման գիտակից, առաջավոր մարտիկների մի միություն է: Այդպիսի մի միություն չի կարող ու չպետք է անտարբեր վերաբերվի դեպի անդիտակցու-

թյունը, դեպի խավարը կամ խավարամոլությունը ինչպիսիք կրոնական հավատալիքներն են»¹⁾։ Այն հարցին, թե կարո՞ղ ե արդյոք կուսակցությունն առանց հակակրոնական պրոպագանդայի յուրա Գնալ, Լենինն ուղղակի պատասխանեց. «Մեր ծրագրերն ամբողջովին կառուցված ե գիտական և այն ել հատկապես մատերիալիստական աշխարհայեցողության վրա։ Ուստի և մեր ծրագրի պարզարանումն անհրաժեշտորեն իր մեջ պարունակում ե նաև կրոնական մշուշի իսկական պատմական ու տնտեսական արմատների պարզարանումը։ Մեր պրոպագանդան անհրաժեշտորեն իր մեջ պարունակում ե նաև աթեիզմի պրոպագանդան»²⁾։

Վոմանք կարծում են թե կրոնի դեմ պայքարելու համար լուսավորական գրականության տարածելը բավական ե։ Լենինը գրում ե, վոր լուսավորական գիրքը քիչ ե։ «Բուրժուական սահմանափակություն կլինեք մոռանալ այն, վոր կրոնի ճնշումը մարդկության վրա՝ հասարակության ներսում գոյություն ունեցող տնտեսական ճնշման արգասիքն ու անդրադարձումն ե միայն։ Վո՞չ մի գրքույկ ու վո՞չ մի քարոզ չի կարող լուսավորել պրոլետարիատին, յեթե նրան չլուսավորի իր սեփական պայքարն ընդդեմ կապիտալիզմի մութ ուժերի։ Յերկրի վրա դրախտ ստեղծելու համար մղվող՝ ճնշված դասակարգերի այդ իրոք հեղափոխական պայքարի միասնականությունն ավելի կարևոր ե մեզ համար, քան յերկնային դրախտի մասին պրոլետարիատի ունեցած կարծիքի միասնությունը»³⁾։

Սա գրված ե 1905 թվի դեկտեմբերյան ապստամբության նախորդակին։ Լենինը շեշտելով կուսակցության դեպի կրոնն ունեցած սկզբունքային թշնամությունը, անհրաժեշտ եր համարում նույնպես մատնանշելու, թե մենք դեմ ենք աշխատավորությանն ըստ հավատացյալների և անհավատների հատկանշի բաժա-

նելուն, թե ցարիզմի ու հին աշխարհի բոլոր ուժերի դեմ մղվող պայքարում անհրաժեշտ ե աշխատավորության միասնություն, և դրա հետ միատեղ նա շեշտել ե, թե մենք կոմունիստներս ու, սոցիալիստներս պատրաստ ենք հակակրոնական պրոպագանդա տանելու։ Այս իսկ տեսակետին են բնկեր ՄՏԱԼԻՆՆ ու մեր ամբողջ կուսակցությունը։ Ընկեր ՄՏԱԼԻՆԸ 1913 թվին ազգային հարցի մասին սքանչելի աշխատություն ե գրել— «Մարքսիզմը և ազգային հարցը»։ Այդ աշխատության մեջ ընկեր ՄՏԱԼԻՆԸ հիմնավորելով մեր հակակրոնական աշխատանքի անհրաժեշտությունը՝ գրում ե.— «Սոցիալ դեմոկրատների ծրագրում կա մի կետ դավանության թզառության մասին։ Ըստ այդ կետի՝ մարդկանց ամեն մի խումբ իրավունք ունի դավանելու ցանկացած կրոնը՝ կաթոլիկություն, ուղղափառություն և այլն։ Սոցիալ դեմոկրատիան պայքարելու յե կրոնական ամեն տեսակի ճնշումների դեմ, ուղղափառներին, կաթոլիկներին և բողոքականներին հալածելու դեմ։ Արդյո՞ք սա նշանակում ե թե կաթոլիկությունն ու բողոքականությունը և այլն՝ ծրագրի «ճիշտ իմաստին հակառակ չեն»։ Վոչ չի նշանակում։ Սոցիալ դեմոկրատիան միշտ բողոքելու յե կաթոլիկությունն ու բողոքականությունը հալածելու դեմ, նա միշտ պաշտպանելու յե ազգերի իրավունքը՝ դավանելու ցանկացած կրոնը, բայց նա միևնույն ժամանակ, յեղնելով պրոլետարիատի ճիշտ ըմբռնված շահերից՝ ագիտացիա յե մղելու թե կաթոլիկության, թե բողոքականության և թե ուղղափառության դեմ՝ աշխատելով, վոր սոցիալիստական աշխարհայացքը հաղթանակի։

Յեվ նա այս բանն անելու յե այն պատճառով, վոր բողոքականությունը, կաթոլիկությունը, ուղղափառությունը և այլն, անկասկած «հակառակ են» ծրագրի «ճիշտ իմաստին», այսինքն պրոլետարիատի ուղիղ ըմբռնված շահերին»¹⁾։

¹⁾ Լենին—«Սոցիալիզմ և կրոն» VIII հ. էջ 420, (ս. հ.)։

²⁾ Նույն տեղ, էջ 421։

³⁾ Նույն տեղ, էջ 421։

¹⁾ И. Сталин, „Марксизм и нац. кол. о́бщес“ стр. 39 изд. 1934 г.

Այստեղ ամենայն պարզորոշությամբ ե գրված հարցը՝ մեր դեպի կրոնն ունեցած վերաբերմունքի մասին, յուրաքանչյուրը կարող ե գավանել իր ցանկացած հավատքը, բայց միեմն ունի ժամանակ մենք այն համոզման ենք, թե պետք ե պրոպագանդա տարվի ամեն տեսակի կրոնի դեմ:

Սոցիալիստական հասարակարգը, խորհրդային հասարակարգը կալվածատերերի, կապիտալիստների դեմ, կուլակների դեմ ու յեկեղեցու դեմ մղվող պայքարումն ե ամրապնդվում: Յեկեղեցին քաղաքացիական պատերազմում շատ ակտիվ հակահեղափոխական ուժ եր հանդիսանում. նա նույնպիսի հակահեղափոխական ուժ ե յեղել. ինչպիսին որինակ, այժմ Իսպանիայում իսպանական շատ կաթոլիկ տերտերներ են: Այն չընշանում տերտերները հատուկ «հիսուսյան գնդեր», «աստվածածնի գնդեր» կազմակերպությունների գլուխ անցած դուրս յեկան, վորտեղ նրանք ֆարաջաները ռազմական զգեստավորման եյին փոխել, և կամ թե իրենց տերտերական հագուստով կարմիր բանակի դեմ եյին գնում, բանվորի ու գյուղացու դեմ եյին գնում: Յերբ քաղաքացիական պատերազմը վերջացավ ու յերկիրը խաղաղ շինարարության անցավ, մենք շատ ծանր տարիներ եյինք ապրում: Բավական ե ձեզ հիշեցնել 1921-1922 թ. թ. յերբ Պովոլոթեյում սաստիկ սով եր: Խորհրդային իշխանությունը բնակչության պահանջով ստիպված յեղավ անցնելու յեկեղեցու արժեքների գրավմանը՝ սովյալների համար հաց գնելու նպատակով: Դրան վորպես պատասխան հոգևորականությունը պատրիարք Տիխոնի բերանով յեկեղեցիներում Խորհրդային իշխանությանը նզովք հայտարարեց: Ճիշտ ե այդ նզովքից մեզ վոչինչ չպատահեց, սակայն ինդիքը միայն նրանց անեծքը չե: Բանը նրանումն ե, վոր նրանք հավատացյալներին, բնակչության ավելի հեղափոխական մասին Խորհրդային իշխանության դեմ յելույթներ ունենալու կոչ եյին անում: Յեմ նրանք, տերտերները, այդպիսի յելույթներ վորոչ տեղերում կազմա-

կերպեցին: Յերբ սկսեցինք գյուղատնտեսության ինդուստրացման ու կոլեկտիվացման քաղաքականությունը կիրառել, կրոնական կազմակերպություններն ու զանազան ուղղությունների յեկեղեցականները՝ տերտերները, բարբրիները, մոլլաները, աղանդավորների դեկավաները հրապարակ յեկան վորպես յերկրի սոցիալիստական վերակառուցման կատաղի թշնամիներ:

Կարելի յեր տերտերականության ու աղանդավորության պայքարից՝ ընդդեմ կոլեկտիվացման, մի շարք փաստեր բերել: Բավական ե հիշել այնպիսի դոկումենտներ, ինչպիսիք «Նամակներ յերկնքիցն» են, յերբ թռուցիկներ եյին տարածվում, վորոնցում տեր աստվածը կոլեկտիվացման դեմ եր արտահայտվում:

Ահա, որինակ, այդ տեսակի մի թռուցիկ. «Հարգելի ընկեր կոլտնտեսականներ, յես ձեզ յերկնային արքայությունից նամակ եմ ուղարկում, վորում խնդրում եմ դուրս գալ կոլխոզից ու ձեր վրա վերցնել ձեր կոլխոզի քայքայման հարվածային աշխատանքը: Ով այդ խնդիրն իրեն համար նպատակ չդնի, նա դժոխք կգնա, իսկ ով դնի, նա իմ կողմից կընդունվի սուրբ հաճկատար ու յերկնային արքայության կարժանանա»:

Այդպիսի թռուցիկներ շատ եյին տարածվում և մինչև անգամ վերջին ժամանակներս տեղ-տեղ գյուղերում այդպիսի թռուցիկներ տարածվում են վարդապետների, կույսերի, թափառաչրջիկ խաչագիծների և այլոց կողմից: Դա սոցիալիզմի դեմ, Խորհրդային հասարակակարգի դեմ տարվող պրոպագանդայի և ագիտացիայի ձևերից մեկն ե:

Տասը տարի առաջ Ամերիկյան պատվիրակությունը, վոր ԽՍՀՄ եր այցելել, ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ գիմեց՝ լուսաբանելու մեր դեպի կրոնն ունեցած դիրքը:

Ընկեր ՍՏԱԼԻՆԸ պատասխանեց. «Մենք պրոպագանդա յենք մղում ու մղելու յենք պրոպագանդա կրոնական նախապաշարմունքների դեմ: Յերկրի որեւորությունն այնպես ե, վոր ամեն մի քաղաքացի իրավունք

ունի դավանելու ցանկացած կրոնը: Դա յուրաքանչուրի խղճի գործն է: Հենց այս պատճառով ել մենք անցկացրինք յեկեղեցու բաժանումը պետութիւնից: Բայց անց կացնելով յեկեղեցու բաժանումը պետութիւնից ու դավանքի ազատութիւն հռչակելով, մենք դրա հետ մեկտեղ յուրաքանչյուր քաղաքացու իրավունք ենք վերապահել համոզելու միջոցով, պրոպագանդայի և ազիտացիայի միջոցով պայքարելու այս կամ այն կրոնի դեմ, ամեն մի կրոնի դեմ: Կուսակցութիւնը չի կարող չեղոք լինել կրոնի նկատմամբ, և նա հակակրոնական պրոպագանդա չի մղում բոլոր և ամեն տեսակ կրոնական նախապաշարմունքների դեմ, վորովհետև նա գիտութիւն կողմնակից է, իսկ կրոնական նախապաշարմունքները գիտութիւն դեմ են դնում, քանի վոր յուրաքանչյուր կրոն գիտութիւնը հակադիր մի բան է»¹⁾:

«...Լինում են դեպքեր, յերբ կուսակցութիւն անդամներից մեկն ու մեկը յերբեմն խանդարում է հակակրոնական պրոպագանդան ամեն կերպ ծաղաղելուն: Յեթե կուսակցութիւնն այդպիսի անդամներին վտարում է, ապա այդ շատ լավ է, վորովհետև այդպիսի «կոմունիստները» մեր կուսակցութիւն չարքերում տեղ չունեն»²⁾:

Դժբախտաբար մեզ մոտ քիչ չեն այն ընկերները, վորոնք հակակրոնական պրոպագանդայով չեն զբաղվում ու չեն ել ուզում զբաղվել:

Յես կարծում եմ, վոր ներկա գտնվողներից ել վոմանք կկարողանային իրենց կշտամբել այն բանի համար, վոր իրենք չեն ոգնել ու չեն ոգնում հակակրոնական պրոպագանդա մղելուն: Մեր կուսակցութիւնը յերբեք հակակրոնական պրոպագանդան կծկելու դիմելով չի տվել:

Ընդհակառակը, նա մի շարք ցուցմունքներ է տվել այն մասին, թե ինչպես այն մղել: Ձեզ հիշեցնեմ 17-րդ կուսակցական կոնֆերանսի վորոշումը՝ եկոնոմիկայի

ու մարդկանց գիտակցութիւն միջից կապիտալիստական մնացորդները վերացնելու համար մղվող պայքարի մասին: Իսկ կրոնը միթե՞ կապիտալիզմի մնացորդ չի մարդկանց գիտակցութիւն մեջ, խոր հնութիւն մնացորդ չէ: Հիշեցնեմ, վոր կուսակցութիւն 16-րդ համագումարն ընկեր Շվեդիայի ղեկուցման աթիւթով ընդունած բանաձեւում վորոշեց, վոր արհմիութիւնները պետք է սիստեմատիկաբար պայքարեն բանվորական միջավայրում յեղած մանր բուրժուական տրամադրութիւնների, նախապաշարմունքների ու կապիտալիզմի մնացորդների դեմ: 16-րդ համագումարը մասնաճեղք, վոր արհմիութիւնները պետք է նշտուրեն կազմակերպեն և ուժեղացնեն հակակրոնական պրոպագանդան: Կարո՞ղ ենք արդյոք մենք ասել, վոր արհմիութիւնները դրանից հետո ուժեղացրել են հակակրոնական պրոպագանդան: Վոչ: Ընդհակառակը, արհմիութիւններն այն կծկեցին: Յես այսօր խոսում եմ «Տրուդ» թերթի ներկայացուցչի հետ: Նա խոստովանեց, վոր ամբողջ արհմիութեանական մամուլում մի քանի տարվա ընթացքում հակակրոնական պրոպագանդայի մասին վոչ մի հոգւած չի կարելի գտնել: Մրանից մի տարի առաջ տեղի ունեցավ կոմյերիտմիութիւն 10-րդ համագումարը, վորը Համ ԼԿՅՄ-ի նոր ծրագիրն ընդունեց: Այդ ծրագրում խոսվում է կրոնական նախապաշարմունքների դեմ սիստեմատիկ պայքար կազմակերպելու անհրաժեշտութիւն մասին: Տարին անցավ, իսկ կոմյերիտմիութիւնը բոլորովին վոչինչ չի արել իր համագումարի վորոշումները կատարելու համար: Մեր կուսակցութիւն ծրագիրը մեզ բոլորիս պարտավորեցնում է հակակրոնական պրոպագանդա մղել: Մինչդեռ հակակրոնական պրոպագանդան վերջին ժամանակներս թուլացել է:

Կրոնական կազմակերպութիւնների ու յերկրում նրանց ունեցած ազդեցութիւն պահպանմամբ շահագրգռված են վոչ միայն կապիտալիստական տարրերի մնացորդները մեր յերկրում, այլ և մեր յերկիրը չբաւատող կապիտալիստական աշխարհը:

¹⁾ И. Сталин. „Вопросы Ленинизма“. стр. 192.

²⁾ Նույն տեղը—стр. 193.

Հակահերոնական պրոպագանդայի գործում մենք հակայական հաջողություններ ենք ձեռք բերել. յես ասում եմ հակայական, վորովհետև հեղափոխության 20 տարվա ընթացքում մենք հիմնովին քայքայել ենք այնպիսի սարսափելի ուժի ազդեցությունը, վորը դարեր շարունակ ճնշել է մասսաների գիտակցությունը: Սակայն շատերը վորոշեցին, վոր յերբ հաջողությունները մեծ են, ապա արդեն հերիք է դրադվել հակահերոնական պրոպագանդայով:

Իսկ յերբ դադարեցին աշխատանքով զբաղվել, ապա դրանից ոգտվեցին ու կոգտվեն յեկեղեցականները, վորպեսզի ամեն կերպ աշխուժացնեն կրոնական տրամադրությունները: Մի շարք դեպքերում որինակ, չորային շրջաններում, ուր մարդիկ ամեն կապ խզել են կրոնական կազմակերպությունից, այժմ ընկնում են տերտերական ազդեցության ազդեցության տակ ու մասնակցել են մադթանքներին՝ անձրևների համար:

Յեւ այսպիսի փաստեր տեղի ունեն. մոլլան դալիս է թաթարական գյուղը և յերեսաներին թլփատում է, ընդվորում նույնիսկ պիոներներին է թլփատում, իսկ պիոներական կազմակերպությունը մասնակցում է այդ գործին: Թափառաչըջիկ տերտերը խորհտնտեսություն է դալիս, վորտեղ յեկեղեցի չկա ու մի շարք տարիների ընթացքում ծնված մարդկանց մկրտում է: Յես ապրել եմ Յակուտսկի արսորում: Այստեղ հակայական տարածության վրա, վորտեղ քվենկների և այլ ազգությունների թափառաչըջիկ ընտանիքներն էյին ապրում, տերտեր չկար: Նա հինգ տարին մի անգամ դալիս էր, մկրտում էր այդ ժամանակաշրջանում բոլոր ծնվածներին, պսակում բոլորին, վորոնք այդ ժամանակամիջոցում արդեն յերեսաներ էյին ունեցել, թաղման ծես էր կատարում նրանց վրա, ովքեր մահացել էյին այդ ժամանակամիջոցում, փողերն ստանում էր ու դնում: Այժմ նույն ձևով են վարվում տերտերները մի շարք տեղերում:

Յերբ վոմանք հրապուրվում են ու ասում թե մեզ

մոտ նոր քաղաքներ կան, վորտեղ վոչ մի յեկեղեցի չկա, դա դեռ ապացույց չէ այն բանի, թե այնտեղ հավատացյալներ չկան: Վերջին 9 տարվա ընթացքում մեծ քաղաքներում բնակիչներին թիվն ուժեղ կերպով աճել է: Քաղաքային բնակչության թվի աճման վրա մեծ ազդեցություն ունեցան յերկրի ինդուստրացման տեմպերը: Մազնիտոգորսկն ու Կարագանդան 1926 թվի մարդահամարի ժամանակ դեռ գոյություն չունեյին: Այժմ դրանք ինդուստրիալ քաղաքներ են, վորոնցում բնակչությունը հաշվվում է՝ առաջինում 200 հազար մարդ, իսկ յերկրորդում՝ 120 հազար մարդ: Ներկայումս Ստալինսկը 120 հազար մարդուց բաղկացած բնակչություն ունի, իսկ 1926 թվի մարդահամարի համաձայն 4 հազար բնակիչ ուներ: Յերկուս ու կես անգամ աճել է Սվերդլովսկի բնակչությունը: Հինգ անգամ ավելացել է Չելյաբինսկի բնակչությունը, Ղազախստանի մայրաքաղաքի — Ալմա-Աթայի բնակչությունը 44 հազարից հասել է մինչև 200 հազարի, մի շարք քաղաքներ են առաջացել բեվեռային շրջանից դուրս — Իգարկա, Կիրովսկ և այլն: Մեր Միության նոր քաղաքներից և վոչ մեկում յեկեղեցիներ չեն կառուցվել: Սակայն դրանից չպետք է յեզրակացնել, թե, որինակ Ստալինսկ քաղաքում 120 հազար բնակչության մեջ հավատացյալներ չկան: Յեկեղեցիներ չկան, իսկ հավատացյալներ՝ դեռ վորքան ուղեք: Բոլոր այդ քաղաքները գյուղերից են մարդիկ դալիս, վորոնք դեռ նոր են մասնակից լինում սոցիալիզմի համար մղվող ափսիսի պայքարին: Այդ բնակչության մեջ շատ հավատացյալներ կան: Սակայն նրանց մեջ հակահերոնական աշխատանք չի տարվում, բոլորն էլ, չգիտես թե ինչո՞ւ կարծում են, թե քանի վոր յեկեղեցիներ չկան, ուրեմն հավատացյալներ էլ չկան:

Մի քանի ընկերներ կարծում են, թե կրոնի դեմ պայքարելու ամբողջ գործը նրանումն է, վոր յեկեղեցիները փակվեն: Նման հայացքները մեր կուսակցությունը դատապարտում է, դատապարտել է ընկեր

ՍՏԱԼԻՆՆ իր «Գլխապատույտ՝ Հաջողություններից» հոդվածում: Վորոշ տեղերում յեկեղեցիները փակվում են առանց բավարար աշխատանքի, առանց բնակչությանը բավարար չափով նախապատրաստելու, առանց աֆսոսանքի, վոր ամբողջ բնակչությունը հասկանա, վոր դա անհրաժեշտ է:

Իսկ դրանից ի՞նչ է ստացվում: Մի շարք վայրեր, բանվորական ավաններ կան, վորտեղ յեկեղեցիները փակվել են առանց որեւէնքնը պահպանելու և դրանով հավատացյալ բնակչությանը հիմք են տալիս հարց հարուցելու յեկեղեցիները բացելու մասին: Յեկեղեցիները փակեցին, իսկ ըստ գործի եյության ամեն ինչ նույնը մնաց: Արդյո՞ք դա ոգնո՞ւմ է հակաիրոնական պրոպագանդային: Արդյո՞ք դա ոգնում է կրոնական տրամադրություններն արմատախիլ անելուն: Դա միայն դեպի Փանատիզմ է տանում, զազազացնում է, կրոնն ավելի խորն է քչում: Դա մեր ոգտին չէ: Յերբ տերտերը զրկվում է իր յեկամուտից, դա դեռ չի նշանակում թե նա դադարեց տերտեր լինելուց: Նա «չարժական տերտերի» յե վերածվում: Նա իր ամբողջ վոչ խորիմաստ կահույքով ման է գալիս գյուղերում, կրոնական արարողություններ է կատարում, աղոթքներ է կարդում, յերեխաներ է մկրտում: Այս տեսակ «չարժական տերտերները» յերբեմն ավելի վտանգավոր են, քան նա, վորը պաշտամունքի սպասավոր է, պարտականությունները մի տեղում է կատարում:

Վոմանք կարծում են, թե յեկեղեցիները լցնում են միայն պառավներն ու ծերունիները: Դա ճիշտ չէ: Յես դեռ չեմ խոսում այն մասին, վոր պառավներն ու ծերունիներն իրենց հետ յեկեղեցի յեն տանում յերեխաներին: Այնտեղ, վորտեղ կրոնական մարդիկ կան, այնտեղ յերեխաներն ել կրոնական վոգով են դաստիարակվում:

Փաստ է այն, վոր շատ յեկեղեցական յերգեցիկ խմբերում պիտներներ են յերգում: Որինակ այսպիսի

քաղաքներում, ինչպես Կովրով, Մուրոմ, Վլադիմիր, Կինիչմա և Իվանովսկայա մարդի մի շարք Փարրիկա-գործարանային ավաններում յեկեղեցական յերգեցիկ խմբերում Փարգուչնիկներ են մասնակցում: Շուրալի (Սվերդլովսկայա մարդի Կիրովյան չրջան) բանվորական ավանում 20 հազար ուրբի յեն հավաքել յեկեղեցին վերանորոգելու համար:

Յեկեղեցին ջանք է թափում աշխատանք ծավալել, բանվորների միջև և արհմիություններն այդ փաստի մոտով անտարբեր չեն կարող անցնել: Մի շարք դեպքերում յեկեղեցու վերանորոգումը բանվորներն իրենց միջոցներով են կատարել: Մեզ մոտ դեռ շատ միլիոնի հավատացյալ մարդիկ կան: Յեվ արհմիության առաջ հսկայական քաղաքական աշխատանք է ծառայած—այդ մարդկանց ղեկցիոն-կրոնական դադափարախոսության ազդեցությունից կտրել: Արհմիությունների առջև անսպառ աշխատանք է ծառանում: Այնինչ արհմիություններն այդ աշխատանքից մի կողմ են քաշվել:

Ի՞նչ է իրենից ներկայացնում Ժամանակակից կրոնական կազմակերպությունը: Մոտավոր հաշվով յերկրում 30.000-ից վոչ պակաս կրոնական կազմակերպություններ գոյություն ունեն: Իսկ ի՞նչ բան է կրոնական կազմակերպությունը: Դա առաջին հերթին ցուցակագրված յեկեղեցին է և այսպես կոչված «քսանանոցը»: Կրոնական համայնքը խորհրդում ցուցակագրելու համար, հարկավոր է ներկայացնել քսան հոգուց վոչ պակաս քաղաքացիների ցուցակ, վորոնք այդ համայնքի անդամներ են: Յեթե դուք հասարակ թվաբանական հաշիվ անելու լինեք և հաշվեք, վոր մեզ մոտ 30 հազար կրոնական համայնքներ կան (իսկ նրանք ավելի շատ են վորովհետև չցուցակագրվածներ ել շատ գոյություն ունեն) ու յուրաքանչյուրում վոչ պակաս, քան քսան մարդ կա, ապա առնվազն մոտ մեկ միլիոն մարդ յեկեղեցական ախտիվ կհաշվեք: Մոսկվայում վորքա՞ն կինո-թատրոններ կան: Ընդամենը 45: Իսկ գործող յեկեղեցիներն զգալի կերպով ա-

վելի յեն: Նրանք կիներն ից վատ չեն դարդարված, իսկ շատ դեպքերում՝ ավելի լավ: Նորերս «Կոմսոմոլսկայա Պրավդան» յերգեցիկ խմբերի պահպանման համար յեկեղեցիների տարած ծախսերի թվերի մեջ բերումներ եր արել: Յես կարծում եմ, վոր իրականում այդ ծախսերը թերթի հայանածից շատ ավելի յեն: Հայտնի յեն դեպքեր, յերբ յերգեցիկ խմբի պահպանման վրա յեկեղեցական համայնքների կողմից տարեկան 120 հազարական ուրլի յե ծախսվում: Յեկեղեցական յերաժշտությունն ու յեկեղեցական յերգեցողությունը հազարամյաներ են հաշվում: Դա նուրբ մտածված յերաժշտություն է, կատարված այն հաշվով, վորպեսզի մարդկանց զգացմունքների վրա ազդի: Տերտերները դարերով մասսաներին խաբել են սովորել: Յեկեղեցիների շուրջը կանացի ակտիվ է կազմակերպված. հաճախ դրանք բանվորուհիներ կամ տնային տնտեսուհիներ են: Մենք չպետք է անտարբեր մնանք բնակչության այդ մասի նկատմամբ:

Այնտեղ, ուր մենք դադարում ենք աշխատելուց, այնտեղ իրենց աշխատանքն են սկսում մեր թշնամիները: Հայտնի յեն դեպքեր, յերբ մեր ակտիվը չի ձեռնարկել Ֆուտբոլի հրապարակ կազմակերպել, իսկ տերտերն այդպիսի հրապարակ տարքել է յեկեղեցու բակում, վորպեսզի յերիտասարդությանն ավելի մոտ քաշի յեկեղեցուն:

Տերտերները նաև քարոզներ են ատում «պատշաճ»: Նրանք սովորել են «չեղոք» մնալ: Նրանք անգամ պատրաստ են «չատ տարիներ յերգել» ե՛լ՝ մարդկոմի քարտուղարին, ե՛լ՝ ուսուցիչի քարտուղարին, ե՛լ՝ ՀԱՄԿԽ-ին և ումն ուղեր:

Յեվ չի կարելի անտեսել այդ ուժը, վոր իրենից ներկայացնում է կրոնական կազմակերպությունը, չի կարելի մոռանալ նրան: Մենք մոռանում ենք այն մասին, վոր յերբ մեզ մոտ սկսվեն ընտրությունները, այդ կազմակերպությունը կարող է դառնալ բոլոր հա-

կախորհրդային ուժերի հավաքման կենտրոն: Չի կարելի, իհարկե, հարցն այնպես դնել, վոր յուրաքանչյուր հավատացյալ — մեր թշնամին է: Դա բացարձակապես սխալ կլիներ: Ընդհանրապես հավատացյալների հսկայական մասը քաղաքականապես մեզ մոտ մարդիկ են: Վիթխարի սխալ կլիներ միլիոնավոր հավատացյալներին մեզանից դեն հրել: Մենք պետք է նրանց գրավենք դեպի մեզ. սակայն նրանց գրավել կարելի յե յեթե մենք պրոպագանդիստական մեծ աշխատանք տանենք, այդ աշխատանքը տանենք հրատարակ, համբերությամբ, հաշվի առնելով հավատացյալների յուրաքանչյուր տվյալ խմբի առանձնահատկությունները, իմանալով ինչպիսի կրոնական կազմակերպություն է գործում նրանց մեջ, ինչպիսի քարոզ է տարվում նրանց մեջ: Այլ բան է Մոսկվան, այլ բան է — վորեւէ Չերկիզովոն, վորտեղ աղանդավորների բներ կան, այլ բան է վորեւէ վայր Տաջիկիստանում, վորտեղ մինչև վերջին ժամանակները գրեթե բացահայտորեն գանձումներ էյին կատարում «կենդանի աստծու» ողտին: Այդ «կենդանի աստվածն» ապրում է Փարիզում, ապրում է յուր քմահաճույքների համար, իսկ խավար հավատացյալները նրա համար ամեն տարի այնքան վոսկի յեն հավաքելու, վորքան նա ինքն է քաշում: Նա, իհարկե աշխատում է ավելի ծանր քաշվել: Այդ գանձումները կատարվում էյին մինչև վերջին ժամանակներս:

Ինչպե՞ս ենք մենք կատարում կրոնի դեմ պայքարելու խնդիրները, վորոնք մեզ վրա յե գրել մեր կուսակցությունն իր համագումարների վորոշումներով ու հատուկ ղեկեկտիվներով: Մենք այդ աշխատանքը վատ ենք կատարում: Յես այդ կշտամբանքն առաջին հերթին ինքս ինձ եմ ուղղում ու մեր Մարտնչող Անաստվածների Միության կազմակերպությանը:

Վերջերս մոդա յե դառել ասելու, թե Անաստվածների Միությունը դա — չգործող անաստվածների միություն է:

Անաստվածների միության թույլ աշխատանքի քննադատությունն արդարացի չէ. սակայն սխալ է, յերբ վորևէ մեկն այդ քննադատությամբ աշխատում է քողարկել իր սեփական անգործությունը, անտարբերությունը դեպի հակաիրոնական պրոպագանդան: Իսկ հարվածել պետք է այդ անտարբերությունը, վորով վերջին տարիներում մեր շատ հասարակական կազմակերպությունները վերաբերվում էյին ՄԱՄ-ին ու հակաիրոնական աշխատանքին, պիտի ասել նրանց ոգնության բացակայության մասին:

Մեզանից չատերիս՝ հակաիրոնականներն Վրա, վոր մնացել ենք այդ աշխատանքում, վոմանք նախում են վորպես խենթավուն մարդկանց Վրա, վորոնք զրազվում են վոչ վոքի պետք չեկող աշխատանքով:

Այդպիսի պայմաններում աշխատելը դյուրին չէր: Մի շարք տեղերում կազմակերպությունները հակաիրոնական պրոպագանդան ամբողջովին կծկեցին: ՄԱՄ-ի շրջանային խորհուրդները լիկվիդացիայի յեն յենթարկվել, — տեղ-տեղ մարզային խորհուրդները նույնպես լիկվիդացիայի յեն յենթարկվել՝ Արհմիության, Կոմյերիտմիության և Լուսժողկոմատի որդանների բարեհաճ աջակցությամբ:

Աշխատանքի այդ թուլացման պատճառներից մեկն այն է, վոր շատերը տարվեցին հակաիրոնական հաջողություններով, ամբողջապես բավական համարելով այդ, գերադնահատելով այդ: Ստացվեց յուրահատուկ ձևի «գլխապտույտ» հաջողություններից». ուրորտունիստական վերաբերմունք առաջացավ դեպի հակաիրոնական պրոպագանդան, վորն իբրև թե անպետք է դուռել, քանի վոր այդպիսի հաջողություններ ենք ձեռք բերել:

Տեսություն յերեման յեկավ, թե կրոնն ինքն իրեն կմահանա: Կրոնի ավտոմատիկ մահացման այդ տեսությունը — չափազանց վտանգավոր ու վնասակար տեսություն է: Ուրորտունիստական մոտեցում դեպի կրոնը — չափազանց վտանգավոր բան է, վորովհետև

մենք աչքներս փակում ենք մի շարք փաստերի հանդեպ, վորոնք վկայում են, թե կրոնի հետ գործը վերջացած չէ, թե կրոնական կազմակերպությունը դեռ գոյություն ունի և պակաս ուժ չի հանդիսանում:

Ավելի վտանգավոր է, յերբ վոմանք ասում են, թե տերտերները դարձել են անվտանգ և խորհրդային:

Հակաիրոնական պրոպագանդայի թուլացումը, դա արդյունքներից մեկն է այն բանի, վոր մեր կուսակցական, կոմյերիտական, արհմիութենական դեկավառներից չատերը կորցրել են մասսայական աշխատանքի ճաշակը: Ընկեր ՄՏԱԼԻՆԸ մատնանչեց, վոր մի քանի կուսակցական կազմակերպություններ կորցրել են ճաշակը դեպի մասսայական-քաղաքական աշխատանքը, մոռացել են մասսաների միջև այդ աշխատանքը տանելու անհրաժեշտությունը: Դա արտահայտվեց նաև հակաիրոնական պրոպագանդայում, վորպես մեր կոմունիզմի պրոպագանդայի բաղադրիչ մասում:

Այնինչ գեռևս վոչ կրոնի, վոչ ել կրոնական նախապաշարմունքների հետ անելիքներս լրիվ չենք վերջացրել բանվոր դասակարգի մեջ: Մինչև այժմ ել, մանավանդ արտադրության այնպիսի ճյուղերում, ինչպես տորֆամշակումը, փայտամթերումը, մանածադործական արդյունաբերությունը, կրոնական նախապաշարմունքները մեծ վնաս են բերում:

Անցյալ տարի «Ֆրեզեր» գործարանում կրոնական տոների որերին բավական մեծ պարագուրդներ յեղան: Իսկ չե վոր «Ֆրեզեր»-ը դա կենտրոն է, Մոսկվա յե: Իհարկե վեցորյակին անցնելը մեծ ազդեցություն ունեցավ կրոնական արարողություններից կտրվելու վրա, վորովհետև վոտնատակ արվեց կրոնական տոների օրացույցը: Կրոնից հրաժարվելու գործում հսկայական ազդեցություն ունեցավ լայն մասսաների կողմից տեխնիկային տիրապետելը: Յեթե կրոնն ուսուցանում է, վոր մարդիկ վորդեր են, վոր նրանք անողնական են «բարձրագույն» ուժերի առջև, ապա ԽՍՀՄ-

ում աշխատավորները գիտեն և զգում են վոր իրենք վորդեր չեն, այլ կյանքի տերերն են, տերեր են յերկրում, այդ իհարկե արագացնում ու դյուրբացնում ե խղումը կրոնից: Սակայն անցյալի շատ մնացորդներ դեռ պահպանված են մնացել: Ինչպես, որինակ, կարող եր պատահել, վոր Գորկովսկի մարզի կրոնական ընկերությունների նախագահների յեկեղեցական ավագների 4 տոկոսը — բանվորներ են: Կա Կոստիչի անունով մի յերկաթուղային ավան: Այդ ավանում մոտ 10 հազար բանվոր ե ապրում: Այդ Կոստիչին «տերտերական կուրորտ» ե կոչվում: Այնտեղ ավելի քան 50 տերտեր գրադված են մարդկանց հիմարացնելով: Հազիվ թե այնտեղ 50 պրոպագանդիստ լինի, վորոնք պրոպագանդիստական աշխատանք են տանում բնակչության մեջ: Պետրոգրադովոգսկում Ունեզյան ու Նիգլինյան յեկեղեցիների յեկեղեցական «քսանանոց»-ների կազմում գերակշռում են բանվորները: Այդ «քսանանոց»-ների անդամներ են բանվորներ՝ Ուրլովը, Անուկովը, Չառեցկու յեկեղեցական խորհրդի նախագահը — բանվորուհի Արիֆմետիկովան ե: Դա արդյունք ե այն բանի, վոր վոչ մի մասսայական աշխատանք չի տարվում: Մենք այսպիսի փաստեր ունենք. մահացել եր Ունեզյան մետաղագործական գործարանի բանվոր Դեգույեվը, ինքն անաստված եր, նրա կինը Քաղխորհրդի ակտիվ աշխատող, սակայն նրան տերտերները թաղեցին: Յեվ վոչ մեկը չի խառնվում այդ գործում, վոչ վորի դա չի հետաքրքրում: Իրկուտսկում ավետարանականների համայնքի նախագահը մինչև վերջին ժամանակներս Կուլբիչևի անվան գործարանի բանվոր Կարմիրկովն եր: Չերեմխով քաղաքում բապտիստական համայնքի նախագահը աղյուսի գործարանի բանվոր Բոգրովն ե: 1936 թվի ամբանը Չերեմխովսկի խորհրդում բապտիստների համայնքից մի դիմում ստացվեց, վորով նրանք խնդրում եյին թույլատրել վեց հասակավոր բանվորների ջրով մկրտել, և վորովհետև այնտեղ դեռ չկա, ուստի խնդրում եյին թույլատրել մկրտություն

ներ ճահճում կատարել: Քաղխորհուրդը մերժեց սանիտարական-առողջապահական մոտիվներով: Ահա ձեզ փաստ, վոր վոչ միայն յերեխաներին, այլ և հասակավոր բանվոր հանքավորներին աղանդավոր քարոզիչները չմեցնում են ու կարողացել են իրենց կողմը գրավել:

Տերտերներն ումնից են հավաքագրում իրենց կողմնակիցներին: Ի՞նչ ե ներկայացնում իրենից հավատացյալների կազմը: Դա միայն այն մարդիկը չեն, վորոնք նոր են յեկել գյուղից: Ահա որինակ, տիխոնովյան (Պրեոբրաժենսկի) յեկեղեցին Իրկուտսկում: Համայնքում ընդամենը 911 հավատացյալ կա, վորոնցից 866 կանայք են, նրանցից 40 տոկոսը բանվորուհիներ են, մնացածը տնային տնտեսուհիներ, ծառայողներ են այսինքն՝ գրեթե բոլորն ել արհմիության անդամներ են: Այդ ընդհանուր թվի, 911 հոգուց 341-ն անգրագետներ են:

Այդ համայնքում 18-ից մինչև 27 տարեկան յերիտասարդների թիվը մոտ 80 մարդու յե հասնում, վորոնցից 53-ը աղջիկներ են: Յերիտասարդների ընդհանուր թվից 41 հոգին բանվորուհիներ են և 31 հոգին տնային տնտեսուհիներ:

Իրկուտսկի հրեական կրոնական համայնքի կազմն այսպես ե. 430 հավատացյալ, վորոնցից 315 կանայք են: Հավատացյալների ընդհանուր թվից 125-ը բանվորներ են:

Այս փաստերից պարզ ե, վոր հրապուրվել նրանով, թե հավատացյալներն իրր թե միայն ինչ վոր ծերեր ու պառավներ են, դա նշանակում ե փաստերի հանդեպ աչք փակել, դա ինքնախաբեկություն ե նշանակում:

Ահա ձեզ բանվորական կենտրոն Իժևկսկը: 1936 թվին այնտեղի յերեցն եր գործարանի նախկին բանվոր Պլեցկին: Հետևաբար, տերտերներն ու աղանդավորները բանվորների միջից վոչ միայն հավատացյալների չարքային մասսա յեն հավաքում, այլ և նրանցից դեկավար կադրեր են պատրաստում:

Ի վանդակի մարզի մի շարք քաղաքներում ու ա-
վաններում, վորտեղ բանվոր-մանածագործներ են ապ-
րում, դեռ մինչև այժմս ել փաստեր կան, վորոնք
վկայում են այնտեղի մեծ կրոնականության մասին։
Բալական ե մեջ բերել կոմյերիտուհի Տիմոնինայի
հետ պատահած հայտնի փաստը, վորը նկարագրված
էր «Կոմսոմոլսկայա Պրավդա»-ում. Տիմոնինան, վոր
նախկին աղանդավորուհի յեր, 1935 թվին կտրեց իր
կապը աղանդից, սկսեց ակտիվորեն մասնակցել ար-
տադրական աշխատանքին, ստախանովական դարձավ,
120-125 տոկոսով եր պլանը կատարում, 1936 թվի մա-
յիսին նա պարզեվատրվեց արհմիության կողմից մե-
տաքսե կտրորով՝ հագուստի համար։ Աղանդավորներն
իմացան այդ մասին. սկսեցին Տիմոնինային շանտաժ-
անել, վորի մասին նա գանդատվեց իր ընկերուհիներ-
ին։ Ոգնություն չգտնելով՝ նա նորից ընկավ աղան-
դավորների ազդեցության տակ, վորոնք նրա միտքը
թունավորելով՝ վերջապես, ներշնչեցին նրան, թե նա
ստախանովականուհի դառնալով «մեղք» ե գործել և
թե նա իր մեղքը պետք ե քավի մահով։ Հալածվելով
ու հետապնդվելով աղանդավորների կողմից՝ նա 1936
թվի մայիսին կտրեց իր յերակները։ Ինչպե՞ս կարող
էր պատահել, վոր ստախանովական կոմյերիտուհին
ընկավ աղանդավորների ազդեցության տակ, վորոնք
նրան հալածեցին։

Ի հարկե անասովածների միությունը մեղք ունի
աշխատանքի թուլացման մեջ։ Բայց չի կարելի մոռա-
նալ, վոր այդ աշխատանքը միակ Մարտնչող Անաստ-
վածների Միությունը չե, վոր պետք ե տանի, այդ
աշխատանքը տանելու յեն մեր բոլոր հասարակական
կազմակերպությունները — և՛ կոմյերիտմիությունը,
և՛ արհմիութենական կազմակերպությունները, և՛
դպրոցն առանձնապես։ Իսկ ինչպե՞ս ե կատարել արհ-
միութենական կազմակերպությունը կուսակցության
ցուցմունքները կրոնի դեմ պայքարելու մասին։ Նա
թերագնահատել ե այդ։

Հապա ինչպե՞ս չողովի այդպիսի դեպքերում մեր
թշնամին այդ դուրթյունից։ Մենք չենք ոգտագործում
բոլոր հնարավոր կանալները հակակրոնական պրոպա-
գանդայի համար։ Վերցրեք, որինալ, կինոն։ Մենք
չատ քիչ հակակրոնական կինո Փիլմեր ունենք։ Կար
մի այսպիսի Փիլմ — «Սուրբ Իորգենի տոնը»։ Դա մեծ
հետաքրքրությամբ եյին դիտում։ Բայց մեր կինոկազ-
մակերպությունները գրեթե դադարեցրել են հակա-
կրոնական Փիլմերի պատրաստման աշխատանքները։
Իսկ չե վոր կարելի յեր պատրաստել և մեծ Փիլմեր,
և կարճ մետրաժկաներ, և գիտական, և կոմիկական
Փիլմեր։

Վերցնենք պրոպագանդայի մի այլ կանալը՝ մա-
մուլը։ Լենինը խորհուրդ եր տալիս թարգմանել ու
վերահրատարակել մատասյական քանակությամբ
18-րդ դարի Փրանսիական մատերիալիստների աթեիս-
տական գրականությունը։ Մենք այդ վատ ենք կատա-
րում։ Մենք չենք ոգտագործում մեր ամենորյա մա-
մուլը — թերթերը հակակրոնական պրոպագանդայի
համար։ Վոչ «ՏՐՈՒԴ» թերթը, վոչ արհմիություննե-
րի ԿԿ վորևե որդան, վոչ բազմատիրաթները հակա-
կրոնական աշխատանք չեն տանում։ Վերջերս հակա-
կրոնական աշխատանքի խնդիրների մասին արհմիու-
թյունների հետ տեղի ունեցած խորհրդակցությանը
բացակայում եր «ՏՐՈՒԴ» թերթի ներկայացուցիչը։
Այսօր թերթի խմբագրատանն ինձ ասացին, թե «իրենք
չեն իմացել», վոր այդպիսի խորհրդակցություն կա։
ՀԱՄԿԽ-ի ղեկավարները խոստացան լինել այսօրվա
Ժողովին, սակայն այդ խոստումը կարծես թե չի կա-
տարված։

Արհմիությունները պետք ե վերջ դնեն իրենց դեպի
հակակրոնական աշխատանքն ունեցած այդ վերա-
բերմունքին։ Արհմիությունները պետք ե մեծ աշխա-
տանք ծավալեն, հատկապես աշխատավորության խոր-
հուրդների առաջիկա ընտրությունների կապակցու-
թյամբ։ Բայց դա կամպանիայի բնույթ չպետք ե կրի։

վտանգավոր կլինե՞ր, յեթե ամեն ինչ կամայանիտյի վերածվեր:

Հապա ի՞նչ պետք է անել:

Պետք է ձեռնարկուրթյուններում վերականգնել անասովածների միության բջիջները:

Անասովածների Միության այդ կազմակերպություններին և՛ արհմիության կազմակերպության, և՛ կոմյերիտմիության, և՛ կուսակցական ոգնություն պետք է ցույց տրվի: ՄԱՄ-ի կազմակերպության համար պետք է պրոպագանդիստներ առանձնացնել, ոգնել պրոպագանդիստական ակտիվ համախմբելու և սողորել ամբողջ մեր մասսայական կուս-դաստիարակչական աշխատանքը հակակրոնական պրոպագանդայի տարրերով:

Պետք է, վոր բոլոր բանվորները հասկանան, թե ինչպիսի վտանգ է բերում կրոնը: Պետք է հասկանան, վոր նախկին ձայնադուրկները, նախկին տերտերներն աշխատանքները կսրեն, կոգտվեն ընտրական իրավունքից, վոր նրանց տալիս է նոր Սահմանադրությունը, վորպեսզի իրենց աշխատանքը ծավալեն: Որինակ, Որեխովո-Չուլեվո 5 տերտեր են վերադարձել. նրանք բնակչության ամենահետամնաց մասում ագիտացիայեն տանում յեկեղեցին բանալու համար:

Յեթե մենք քնենք, ապա կպատահի այն, ինչի մասին մեզ նախազգուշացրել է ընկ. ՍՏԱԼԻՆԸ, և մեծագույն խայտառակություն կլինի մեզ համար, յեթե մեզ թշնամի մարդիկ անցնեն աշխատավորության խորհուրդները: Հարկավոր է վոչ թե լաց լինել, այլ աշխատել:

Հարկավոր է լավ մտածել մեր պրոպագանդայի ծրագրի և թեմատիկայի մասին: Անհրաժեշտ է արհմիութենական կազմակերպությունների սերտ կապը Մարտնչող Անասովածների Միության կազմակերպությունների հետ և նրանց բզնությունը: Անհրաժեշտ է, վոր ամբողջ արհմիութենական մամուլում հակակրոնական նյութեր տպագրվեն, և արհմիությունների

հրատարակչությունները հակակրոնական գրականություն տպագրեն:

Յեկեք կազմակերպենք դասախոսություններ, գրույցներ, ցուցահանդեսներ ակումբներում, կարմիր անկյուններում, ձեռնարկություններում, հակակրոնական գրականության ցուցահանդեսներ: Դրա համար հարկավոր է ոգտագործել և՛ հակակրոնական բովանդակության գեղարվեստական գրականություն և՛ դիապոզիտիվներ: Հարկավոր է ոգտագործել հակակրոնական և գավառագիտական թանգարանները: Հարկավոր է, վորպեսզի թերթերն գրադվեն կրոնի՝ բանվորների վրա ազդելու փաստերի լուսաբանմամբ: Մենք առիթ չունենք այդ փաստերը թագցնելու: Դրանք յերեվան պիտի հանվեն և դրանցով պետք է սովորեցնել առաջավոր բանվորներին՝ կուսակցության անդամներին և անկուսակցականներին, թե վորքան վտանգավոր է կրոնական նախապաշարմունքների դեմ մղվող պայքարի մոռացումը: Հարկավոր է գրավել գիտնականներին, ինժեներներին ու տեխնիկներին՝ մասնագիտական խնդիրների մասին դասախոսություններ կարդալու, բայց վորոնք միևնույն ժամանակ ինկատի պետք է ունենան և այդ խնդիրը—հակակրոնական պրոպագանդան: Յեթե մենք լրջորեն սկսենք այդ դործը — իսկ մենք պարտավոր ենք այդ դործն սկսել, ապա այն զանցառությունները, վոր մենք ունենք այդ բնագավառում, շուտով կուղղենք և կծավալենք իսկական հակակրոնական պրոպագանդա:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹ ՅՈՒՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏ- ՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱՆԱՆԻՍՆ

Սոցիալիզմի յերկիրը, մինչև վերջ հետեւողական
գեմոկրատիայի միակ յերկիրն աշխարհում, պատ-
րաստվում է Գերագույն Խորհրդի— ԽՍՀՄ—ի պետա-
կան իշխանության գերագույն որդանի ընտրություն-
ներին: Ստալինյան Սահմանադրությունը, վորն ար-
ձանագրել է սոցիալիզմի խոշորագույն հաղթանակնե-
րը, ամենագեմոկրատական ընտրական սխտեմն է նա-
խատեսում: «ԽՍՀՄ—ի Գերագույն Խորհրդի ընտրու-
թյունների կանոնադրությունը» լրիվ համապատաս-
խանելով սոցիալիստական պետության Սահմանադրու-
թյանը՝ վորոշում է պետական իշխանության բարձրա-
գույն որդանի իսկական գեմոկրատական ընտրու-
թյունների սխտեմն ու կարգը: Ընդհանուր, համասար
և ուղղակի ընտրական իրավունքը՝ գաղտնի քվեար-
կությամբ տասնյակ տարիների ընթացքում կրճատ-
վում ու կեղծվում էր բուրժուական գեմոկրատիայի
յերկրներում: Ֆաշիստական յերկրներում նա հրեշա-
վոր կերպով աղճատված ու բնակչության կամքը ծաղ-
րելու սխտեմի յե վերածված: Միայն սոցիալիզմի
յերկրում, պատմության մեջ առաջին անգամ նա դար-
ձել է կենսական իրականություն, ժողովրդի կամքի ի-
րական արտահայտությունը: Քաղաքացիների ազատ
կամքի արտահայտումն իշխանության որդանների ընտ-
րությունների ժամանակ ապահովված է Սահմանա-
դրությամբ ու նրա խախտումը պատժվում է որենքով:

Իսկական—գեմոկրատական ընտրական սխտեմը, վորի
իրագործումից բուրժուական պետություններում սար-
սափում են տիրող դասակարգերը, վորի անցկացումը
Ֆաշիստական յերկրներում վտնատակ կաներ Ֆաշիս-
տական տիրակալներին, մեր յերկրում կոմունիզմի հե-
տագա հաղթանակների, աշխատավորության բարեկե-
ցության ու կուլտուրայի հետագա վերելքի պայքարի
գենքն է հանդիսանում:

ԽՍՀՄ—ի քաղաքացիների կամքի ազատ արտահայ-
տումը մեր յերկրում, խորհրդային ժողովրդի վստա-
հության ամենաբոցավառ ցույցը կհանդիսանա գեղի
խորհրդային պետությունը, կոմունիստական կուսակ-
ցությունն ու բոլոր աշխատավորների առաջնորդ ըն-
կեր ՍՍԱԼԻՆԸ:

Ֆաշիզմը գեմոկրատիայի ամենավոխերիմ թշնա-
մին է: Ֆաշիզմի հափշտակիչ, բարբարոսական քաղա-
քականությունն արմատապես հակասում է ժողովրդի
չահերին, հետեւաբար և նրա կամքին: Չե վոր ժողո-
վրդի ազատ կամքի արտահայտմամբ չէր, վոր իտա-
լական Ֆաշիզմը գրավեց Հաբեշտանը: Ժողովրդի
կամքով չէ, վոր գերմանական ու իտալական Ֆաշիստ-
ները պատերազմ են մղում Իսպանական ժողովրդի
դեմ: Ճապոնական ժողովրդի կամքով չէ, վոր ճապո-
նական իմպերիալիստները թալանում են Չինաստանը,
գրավում են Չինական հանրապետության տերիտո-
րիան: Ժողովրդի կամքով չէ, վոր Ֆաշիստական
Չարդարարներն իրենց յերկրներում քաղցի, աղքատու-
թյան և արյունարբու ահաբեկման ուժիմ հիմնեցին:

Յեթե Ֆաշիստներն իրենց յերկրների ժողովուրդնե-
րին թողնեյին ազատ արտահայտելու իրենց կամքն ու
պահանջները, Ֆաշիզմին վերջ կդրվեր:

Միայն Խորհրդային պետությունն է ապահովում
իսկական գեմոկրատիան, աշխատավորության կամքի
ազատ արտահայտումը, վորովհետեւ Խորհրդային պե-
տությունը, բացի աշխատավորության չահերի իրա-
գործման քաղաքականությունից, կոմունիզմ կառուցե-

լու քաղաքականութիւնից, վորը մարդկութեանը յերջանկութիւն ու ծաղկում է բերում, այլ քաղաքականութիւն չունի:

Ստալինյան Սահմանադրութիւնը և սոցիալիստական հասարակութեան ընտրական որենքը, վոգեւորում ու մոբիլիզացիայի յեն յենթարկում աշխատավորութեանը դեպի սոցիալիզմի նոր հաջողութիւններ ու հաղթանակներ: Ամեն մի որ սոցիալիզմի յերկրին նոր հաղթանակներ ու նվաճումներ է բերում: Ստալինական շարժման ծավալումն արդիւնաբերութեան ու գլուղատնտեսութեան մեջ, կուլտուրայի և գիտութեան ծաղկումը, Հյուսիսային բեմբուի նվաճումը բեմբուային փառապանծ ողաջունների կողմից՝ ահագեմիկոս ՇՄԻԴՏԻ գլխավորութեամբ, ընկ. ընկ. Չկալովի, Բայդուկովի և Բելյակովի, Իսկ հետո Գրոմովի, Յուսալովի և Դանիլինի— հերոսական թուիչքները ԽՍՀՄ-ից դեպի Ամերիկա Հյուսիսային բեմբուի վրայով, վորոնք ուղիղ գծով թուիչքի հեռավորութեան ռեկորդ սահմանեցին— այս բոլորը սոցիալիզմ կառուցողների հպարտութեան և ուրախութեան օրինական զգացմունք է զարթեցնում: Խորհրդային Միութեան յուրաքանչյուր ցայտուն հաղթանակն ամբողջ աշխատավորութեան հաղթանակն է, վորովհետև ամբողջ յերկրի ջանքերով է պատրաստվում:

Սոցիալիզմի առաջնադասումը ԽՍՀՄ-ի կապիտալիստական շրջապատում յեղած թշնամիների ու նրանց մեր յերկրի ներսում գտնվող գործակալութեան կատաղութիւնն ու ցասումն է առաջացնում: Փաշիստական ջարդարարներն ու նրանց տրոցկիստական-բուխարինյան գործակալները փորձում էին ու փորձում են վիժեցնել սոցիալիզմի առաջադիմութիւնը, ազատված ժողովրդին տանջանքների, աղքատութեան ու հարստահարման մատնել, վոտնակոխ անել աշխատավորութեան ազատութիւններն ու նրանց փոխարեն Փաշիստական բարբարոսութիւն հաստատել: Զապոնական-գերմանական-տրոցկիստական — բուխարինյան ավա-

զակները դիվերսիայի, մատնիչութեան ու տերրորի միջոցով ուզում էին քայքայել Խորհրդային Միութեան ուժը, պատրաստում էին Փաշիստական պետութիւնների ինտերվենցիան մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու համար: Ֆաշիզմի ու նրա գործակալութեան բանսարկութիւնները մերկացված ու ջախջախված են:

Ժողովուրդների առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքները՝ կապիտալիստական շրջապատման փաստի մոռացութեան վտանգի մասին, բոլշեվիկյան զգոնութեան անհրաժեշտութեան և անհաշտ պայքար անհոգութեան ապուշային հիվանդութեան դեմ մղելու անհրաժեշտութեան մասին, դինեցին բոլոր կուսակցական և անկուսակցական բոլշեվիկներին պայքարելու ժողովրդի դիմակավորված թշնամիների, մատնիչների ու դիվերսանտների դեմ: Փառապանծ Ներքգործողկոմ-ցիներն ընկեր ՍՏԱԼԻՆԻ սան ընկ. Յեթովի գլխավորութեամբ Փաշիստական դարչելու կոկորդից բունեցին ու դուրս հանեցին նրան ամենադիմակավորված անցքերից: Մատնիչների ու դավաճանների բանդայի դեկավարները բռնված են ու ամբողջ ժողովրդի կամքով վոչնչացված:

Սակայն տրոցկիստական-բուխարինյան շայկայի թափթփուկները Փաշիստական մատնիչներն ու վնասարարները, վորոնք հավաքագրվում ու մեր յերկրին են ուղարկվում Փաշիստական պետութիւնների կողմից, դեռևս ամեն տեղ մերկացված ու վոչնչացված չեն: Կապիտալիստական շրջապատը չի կարող հաշտվել ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի փաստի հետ, և ամեն ջանք գործ է դնում, ամենանենգ միջոցներն է գործադրում սոցիալիստական պետութեան դեմ պայքարելու համար: Ժողովրդի թշնամիները վնասում են սոցիալիստական հայրենիքին, ձգտում են արգելակել սոցիալիզմի հաղթական յերթը:

Թշնամական տարրերի միջև պակաս քանակութեամբ չեն գործում տերտերներ և աղանդավորական

դեկավարներ: Ժողովրդի թշնամիներն ոգտազործում են աշխատավորության հետամնաց մասի կրոնական նախապաշարմունքները՝ սոցիալիզմի դեմ պայքարելու համար: Խորհրդային դեմոկրատիայի լայնացումը ռեակցիոն հոգեվորականությունը ձգտում է չեղել իր ոգտին, իր վնասակար գործունեություն ռեզոգաման համար: Այնտեղ, ուր բացակայում է հակակրոնական աշխատանքը, վորտեղ ամենորյա պայքար չի տարվում կրոնական խավարամտություն դեմ, յեկեղեցականները լսլիբչանում և ակտիվանում են:

Գորկու յերկրի Ուրենսկի ռայոնի Մ. Արեյ գյուղի տերտերը բացահայտորեն հակախորհրդային ագիտացիա յեր տանում կոլտնտեսականների մեջ և ի պատասխան կոլտնտեսականների նախազգուշացմանն իր արարքների համար պատասխանատվության մասին, նա՝ գրպանից հանելով Սահմանադրությունն առաց. «Յես այժմ հավասար իրավունքի տեր քաղաքացի յեմ: Ինչ ուղենամ, այն ել կանեմ»:

Պարզ է, վոր տերտերի նման լկտի յելույթը կարող եր տեղի ունենալ միայն այնտեղ, վորտեղ բացատրական աշխատանքը բարձրություն վրա չե դրված, վորտեղ կոլտնտեսականներին չեն մեկնաբանել, վոր դեմոկրատիայի լայնացումը չի նշանակում պայքարի թուլացում հակախորհրդային տարրերի դեմ:

Թշնամական տարրերը, վորոնց թվում և յեկեղեցական-աղանդավորական պարագլուխները, կիրորձեն առաջիկա խորհուրդների ընտրություններն իրենց ռեակցիոն նպատակների համար ոգտազործել: Դեռ այժմյանից յեկեղեցականները նախապատրաստական աշխատանք են ծավալում, պատրաստվում են իրենց թեկնածուներին անցկացնել Խորհուրդների մեջ: Մոսկվայի Մարգգործկոմի նախագահ ընկ. Ֆիլատովը ՍՍՀՄ-ի ԿԳԿ 4-րդ սեսիային հաղորդեց այդպիսի պատրաստություն փաստերի մասին:

«Մենք առաջիկա ընտրական կամպանիայի գժվարություններն անրավարար կերպով ենք հաշվի առ-

նում: Դատակարգային թշնամին իր ձևով կպատրաստվի ընտրություններին: Ստիպված ենք հավաստելու, վոր, որինակ, մեր մարդի առանձին չըջաններում յեկեղեցականներն աշխուժացրել են իրենց գործունեությունը: Այսպես՝ մեր մարդի Չերնովի չըջանի Յերթինո գյուղում հաշվետու ժողովին տերտերը յելույթ ունեցավ և չնորհակալություն հայտնեց աշխատավորությունն ու Խորհրդային իշխանությունը նրա համար, վոր նրան հասարակական կյանքին մասնակցելու իրավունք է տրված: Սա—ավելի դելիկատ դեպքն է, դավելի դելիկատ տերտերն է:

Նույն չըջանի մի ուրիշ գյուղում, Գունկովսկում, ժողովի նախագահություն մեջ տերտեր Բոգոսլավըսկու թեկնածությունն է առաջադրվել: Ակտիվ դուրս հանեց այդ թեկնածությունը, տերտերը չընտրվեց նախագահություն մեջ, սակայն փաստը մնում է փաստ. դյուղխորհրդում կուլակներ ու յենթակուլակներ գըտնրվեցին, վորոնք նրա թեկնածությունն առաջադրեցին:

Սակայն, չնայած մեզ թշնամի տարրերի մանավանդ յեկեղեցականների ակտիվությունը, դյուղական խորհուրդների մի մասն աշխատավորության մեջ լայն կուլտուրական-քաղաքական ու հակակրոնական աշխատանք չի ծավալել»¹⁾:

Արդի պայմաններում հակակրոնական պրոպագանդան հատկապես մեծ նշանակություն է ստանում: Նա պետք է մերկացնի թշնամիներին, վորոնք կրոնի դրոշի տակ են դուրս գալիս, կրոնական-աղանդավորական խավարամտների յելույթները պետք է խափանի, ցրիվ տա կրոնական նախապաշարմունքները, վորոնք պահպանվել են մեր յերկրի բնակչության մի մասի գիտակցություն մեջ:

Ներկա ետապում հակակրոնական պրոպագանդայի և ագիտացիայի հիմնական խնդիրները վորոնք պիտի

¹⁾ „Известия“ от 11 июля 1937 г.

լինեն: Հակակրօնական պրօպագանդայի հիմնական բովանդակութիւնը պետք է կենտրոնացվի Ստալինյան Սահմանադրութեան և ընտրական օրենքի բացատրման շուրջը և հատկապես դրանց այն հոդվածների շուրջը, վորոնք ուղղակի վերաբերում են կրօնական նախապաշարմունքների դեմ ուղղված պայքարին: Յեկեղեցականների կողմից այդ հոդվածները ծուռ ու մուռ են մեկնաբանվում և պարզ է, իհարկե՝ վոչ աշխատավորութեան ոգտին: Սահմանադրութեան հոդվածների աղճատված մեկնաբանութեամբ յեկեղեցականները ճրդտում են ուժեղացնել իրենց ազդեցութիւնը մասսաների վրա, լայնացնել իրենց կողմնակիցների շրջանակը, ապականել թորհրդային իշխանութիւնը: Լպիրշ խաւարամոլները հաճախակի մինչ այնտեղ են հասնում, վոր կրօնական արարողութիւնների կատարումը պարտադիր են հայտարարում իրր թե Սահմանադրութեան համաձայն: Արեմոյան Սիրիւրի յերկրի Շուրենկի գյուղի կոլխոզնիկ Կիրիլովը 20 տարվա ամուսնական կյանքից հետո կնոջ հետ պսակվեց յեկեղեցում: Պարզվեց, վոր տերտերները համոզել էին Կիրիլովի կնոջը, թե իրր համաձայն նոր Սահմանադրութեան, հարկավոր է անպայման յեկեղեցում պսակվել, և թե, ով չի պսակվում, նա իրր թե խախտում է Սահմանադրութիւնը:

Դեպքեր են հայտնի, յերր Սահմանադրութեան կենսագործման պատրվակի տակ, տերտերները հասակավոր յերեսաներ են մկրտել, ստորագրութիւններ են հաւաքել՝ բնակչութեան պահանջով վաղուցվանից փակված յեկեղեցիները բացելու համար և ալին: Սահմանադրութեան աղճատված մեկնաբանումը՝ դա բրնակչութեան տերտերական հիմարացման ամենատարածված ձևն է: Իզուր չե, վոր յեկեղեցական իշխանութիւնը խրախուսում է տերտերներին, վորոնք աչքի յեն ընկնում Սահմանադրութեան խեղաթյուրման գործում: Հյուսիսային յերկրում յերկու տերտեր թեմական իշխանութիւնից կրծքախաչեր ստացան... հա-

վատացյալներին Սահմանադրութիւնը բացատրելու համար:

Հակակրօնական պրօպագանդայի ծավալումով մենք պետք է ջախջախենք տերտերական խարդախութիւններն ու սրիկայութիւնը: Անաստված կազմակերպութիւնների համար չի կարելի խայտառակ չրհամարել այնպիսի դրութիւնը, յերր վոչ թե անաստվածները, այլ տերտերները, և իհարկե, իրենց ոգտին, հնարք են փնտռում Սահմանադրութեան հոդվածները կրօնի մասին հավատացյալներին «մեկնաբանելու»:

Ինչպիսի խեղիւրներ են առաջանում Սահմանադրութեան և ընտրական օրենքի բացատրութեան կապակցութեամբ կրօնի ու հակակրօնական պրօպագանդայի մասին:

Ամենից առաջ դա խղճի աղատութեան հարցի բացատրութիւնն է: Հարկավոր է բացատրել, վոր Ստալինյան Սահմանադրութիւնը, վորը խորհրդային դեմոկրատիայի ծաղկումն է նշանակում, խղճի իսկական աղատութիւն է ապահովում: Պետք է հիշեցնել, վոր ցարիզմը խեղդում էր խղճի աղատութիւնը, տիրող ուղղափառ յեկեղեցուն արտօնութիւններ էր շուայում, հալածում էր ուղղափառութիւնից տարբերվող դավանութիւնները և դաժանորեն պատժում էր վոչ հավատացյալներին:

Խղճի աղատութիւնն նշանակում է՝

1) կրօնական դավանութիւնների աղատութիւն, յեկեղեցու բաժանումը պետութիւնից, պետութեան կողմից այս կամ այն կրօնական կազմակերպութիւններին ոգնելու արգելում, նույնպես և կրօնական համոզմունքների համար մարդկանց հետապնդելու արգելում, 2) անհավատ լինելու, վոչ մի դավանութեան չադատկանելու աղատութիւն, 3) կրօնական նախապաշարմունքների դեմ պայքար տանելու, հակակրօնական պրօպագանդ մղելու աղատութիւն: Խղճի աղատութեան այս յերեք մոմենտներն էլ ցարիզմը ճնշել է:

Յարական Ռուսաստանում ուղղափառ յեկեղեցիներն անհաշիվ թվով զանազան անհատներու հետ, պետական յեկեղեցիներ, իսկ քաղաքացիները՝ ճորտատիրական կախման մեջ ելին պետական յեկեղեցուց: Գոյութիւն ունեցին ու կիրառւում էին, միջնադարյան ինկվիզիտորական որենքներ, վորոնք հալածում էին ուղղափառութիւնից հեռանալու, ուրիշ հալածութիւններ, մանաւանդ անհալածութեան համար, վորոնք բռնանում էին մարդու խղճի վրա:

Բերենք մի քանիսն այդ ինկվիզիտորական որենքներից: «Բրեյական և ուղղիչ պատժական որենագրութեամբ» հետևյալ հոգւածները կային.

«Սաղրանքների, գայթակղեցման և այլ միջոցներով, վորեւէ մեկին ուղղափառ կամ այլ դավանութեան քրիստոնեական հալածութիւնից դեպի մահմեդական, հրեական կամ այլ վոչ քրիստոնեական հալածութիւն քաշելու համար, հանցավորը դատապարտւում է կարողութեան բոլոր իրավունքներից զրկւելուն և ութից տասը տարի ժամանակով տաժանակիր աշխատանքի աքսորի»: (§ 184):

Ուղղափառութիւնից տարբերող դավանաբանութեան տարածումը նույնպէս խիստ պատժւում էր որենքով.

«Արդեն ուղղափառ յեկեղեցուց անջատված գոյութիւն ունեցող հերետիկոսութիւնների և հերձվածների տարածման, նույնպէս և վորեւէ նոր, հալածութիւն մատարեր աղանդներ հիմնադրելու մեջ մեղավորները սույն վոճրագործութեան համար յենթարկւում են կարողութեան բոլոր իրավունքների զրկման և աքսորավայրի՝ Յեկեղեցիական Ռուսաստանից՝ Անդրկովկաս, Ստավրոպոլյան նահանգից և Անդրկովկասից՝ Սիբիր, իսկ Սիբիրից՝ նրա ամբողջ հեռավոր կողմերը»: (§496)

Կրոնական նախապաշարմունքների մերկացումը, աթեիզմի պրոպագանդան արգելված էին, վորպէս ծանր վոճրագործութիւններ և դատանորեն պատժւում էին ցարական կառավարութեան կողմից:

«Ով հասարակական վայրում, քիչ թե շատ մարդաշատ ժողովի ժամանակ հանդգնի դիտավորյալ կերպով պարսավել քրիստոնեական հալածութիւն կամ ուղղափառ յեկեղեցիներ, կամ հայհոյանք թափի սուրբ գրքի կամ սրբազան խորհուրդների վրա, նա յենթարկւում է կարողութեան բոլոր իրավունքներից զրկման և վեցից ութ տարի ժամանակով տաժանակիր աշխատանքի յեքստրմում»: (§178)

Վոչ միայն աթեիզմի անմիջական պրոպագանդան էր հալածանքի յենթարկւում, այլև յեկեղեցու անհաճո ամեն մի դիտողութիւն՝ յեկեղեցական այս կամ այն արարողութիւնների նկատմամբ:

«Այսպէս կոչված սրբապղծութեան, այսինքն, կրծու ծաղրանքների մեջ մերկացվածները, վորոնք ապացույց են ուղղափառ յեկեղեցու որենքները կամ արարողութիւնները, կամ անհասարակ քրիստոնեութիւնը բացահայտ կերպով չհարգելու, դատապարտւում են բանտարկելութեան՝ չորսից մինչև վեց ամիս ժամանակով»: (§182)

«Սրբապղծութիւն» հասկացողութեան տակ, իհարկէ, հասկացվում էր յեկեղեցական կանոնների հետ յեղած յուրաքանչիւր անհամաձայնութիւն:

Բոլոր այդ խայտառակ միջնադարյան որենքներն ապացույց են այն բանի, վոր ցարական Ռուսաստանում անձնավորութեան բոլոր իրավունքները, խղճի ազատութեան ամեն մի նշույլ անհապաղորեն ճնշվում էին: Յեկեղեցիներ պետութեան վոստիկանական պահապնորդութեան ներքո յեր գտնվում և ինքն ել ինքնակալութեան վոստիկանական պահապնորդութեան են, իսկ նրա պահապնորդները — «Փարաջաներով ժանդարմներ էին» (Լենին):

Խղճի ազատութեան ճնշումը տեղի յեր ունենում է և տեղի յե ունենում նաև բուրժուական հանրապետական պետութիւններում:

Բուրժուական յերկրներում ձեւականորեն խղճի ազատութիւն է հռչակվում, սակայն իրականում աշ-

խատաժոր մասսաների խիղճը բուրժուական ու կրոնական պրոպագանդայի ամբողջ ապարատի կողմից սիստեմատիկաբար բռնաբարվում է: Դպրոցի, մամուլի, յեկեղեցական քարոզների և այլ միջոցներով բուրժուազիան ձգտում է աշխատավոր մասսաների գիտակցության մեջ շահագործողների համար ոգտավետ, վորոչակի աշխարհըմբռնում ներդնել: Կապիտալի շահերը պաշտպանելով, յեկեղեցին մասսաներին դաստիարակում է հնազանդության վրդով, յերկնային պարգևի քարոզներով չեղելով նրանց յերկրի վրա կյանքի բարելավման պայքարից, շահագործողների հասարակարգի դեմ ուղղված պայքարից:

Բուրժուական սահմանադրություններում կրոնի կապը կապիտալի հետ, սովորաբար, ֆիկսացիայի յե յենթարկվում: Բուրժուական յերկրների ամենից «դեմոկրատական» սահմանադրություններում բռնություն և անցկացվում բնակչության մեծամասնության խղճի վրա:

Բուրժուական դեմոկրատիայի դեպի կրոնն ու յեկեղեցին ունեցած վերաբերմունքի մասին ամենից լրիվ պատկերացում տալիս է, այժմ արդեն Ֆաշիզմի կողմից վրտնատակ արված, Գերմանական հանրապետության սահմանադրությունը (1919 թ. Վեյմարյան սահմանադրությունը): Վեյմարյան սահմանադրության մեջ բուրժուական դեմոկրատիայի սովորական յողունդն է հռչակվում. «Խղճի ազատություն»: Սակայն դրանից հետո հողվածներ են դալիս, վորոնք խղճի ազատությունը հավասարեցնում են դատարկ ֆրազի:

137 հողվածի հատվածներից մեկը, վորպես որենք է հաստատում հետեվյալ դրությունը. «Կրոնական բնկերությունները, վորոնք հասարակական, իրավական կորպորացիաներ են հանդիսանում, քաղաքացիական հարկային ցուցակն չի հիման վրա, մարդային որենսդրության վորոշման համապատասխան, իրավունք ունեն հարկ դանձելու»: Այսպիսով, սահմանադրությամբ

կրոնական կազմակերպությունների ոգտին հարկեր են սահմանվում: Միաժամանակ հարկերի դանձումը քաղաքացիական հարկային ցուցակների հիման վրա յեր կատարվում: Արդյո՞ք սա պետության ուղղակի կապը չէ յեկեղեցու հետ, յերբ սահմանադրությունը յեկեղեցական հարկերի դանձումը քաղաքացիական հարկերի սկզբունքներով է ծրագրել: Արդ՞յոք դա բռնություն չի խղճի վրա, յերբ յեկեղեցական կազմակերպությունները պետական իշխանության հովանավորությամբ քաղաքացիներին պարտադրում են յեկեղեցական հարկեր վճարելու: Խղճի ազատությունը յենթադրում է, թե քաղաքացին անկախ է պաշտամունքի սպասավորներից ու կրոնական կազմակերպություններից: Յեթե հավատացյալը պաշտամունքի սպասավորի կարիք ունի, նա կամավոր մատուցումներ է տնում: Գերմանական սահմանադրությունը դրա վրտարեն յեկեղեցուն պարտադիր հարկեր դանձելու իրավունքներ է տալիս:

Պաշտամունքի սպասավորների հայտարարության համաձայն յեկեղեցին միայն հողու վրկությամբ է դրադվում: Իրբ թե աշխարհիկ գործերը նրան չեն վերաբերում: Սակայն բուրժուական սահմանադրություն կազմողները հիանալի հասկանում եյին, վոր դա այդպես չէ: Բուրժուազիան հանձինս յեկեղեցու ցանկանում է ժողովրդի հողելվոր հիմարացման հզոր կազմակերպություն ունենալ: Բուրժուազիան հասկանում է, վոր այդ բանի համար, և վոչ թե հողու վրկության համար, յեկեղեցին պետք է հարստություններ, լայն իրավունքներ և արտոնություններ ունենա: Ահա թե ինչու գերմանական սահմանադրության 138-րդ հողվածում հիշատակված է. «Աստվածապաշտության, ուսումնական և բարեգործական նպատակների համար նախորդված կրոնական բնկերությունների և կրոնական միությունների հիմնարկային, ավանդային և այլ գույքային սեփականությունները և ուրիշ իրավունքներն ապահովված կլինեն»: Յեկեղեցու հարստություն

ների և իրավունքների մասին, ինչպես տեսնում ենք, բուրժուական սահմանադրությունը մեծ հոգատարություն է ցուցաբերում: Շահագործողների պետությունը աչալուրջ հսկում է հիմարացման բների գույքային և իրավական չահերին:

Լեհական հանրապետության 1921 թ. սահմանադրության միջից, վորն ընդունված էր դեռ նախքան Պիլսուդսկու հեղաշրջումը, դժվար չի ցուցական դեմոկրատիզմի տակ յերևան հանել կրոնի և կապիտալի կապը, խղճի ազատության սկզբունքի խախտումը: Լեհական սահմանադրության 111-րդ հոդվածը խղճի և դավանության ազատություն է հռչակում, սակայն 114-րդ հոդվածը, հռմեական — կաթոլիկական յեկեղեցուն արտոնյալ դրություն է տալիս, դրանով խախտելով դավանության ազատությունը: «Հռմեական — կաթոլիկական յեկեղեցին, — ասված է այդ հոդվածում, — ժողովրդի գերակշիռ մեծամասնության կրոնը լինելով պետության մեջ առաջին տեղն է գրավում իրավահավասար դավանությունների միջև»: Ինչպես կարելի չե խոսել դավանության ազատության և իրավահավասարության մասին, յեթե ըստ սահմանադրության հռմեական — կաթոլիկական յեկեղեցին առաջին տեղն է գրավում պետության մեջ: Ուրեմն, մնացած դավանություններն այն իրավունքներից չեն ոգտվում, վորոնք կաթոլիկական յեկեղեցուն են տրված: Խոսք չի կարող լինել նույնպես և խղճի ազատության մասին, յեթե կաթոլիկական յեկեղեցու համար ճանաչված է, վոր «նա պետության մեջ առաջին տեղն է գրավում»: Այսպիսի դեպքում անհավատը կարող է արդյոք լի իրավ քաղաքացի լինել: Արդյոք խղճի ազատություն յերաչիսվորվում է նրան, ով պետության մեջ կաթոլիկական յեկեղեցու առաջին տեղ գրավելը չի ընդունում, ով, ասենք, ժողովրդի լուսավորությունն ու նրա կրոնական նախապաշարմունքներից ազատվելն է առաջին տեղը դնում: Պարզ է, վոր «խղճի ազատությունը» լեհական սահմանադրության մեջ լոկ ֆրադ է հանդիսանում: Սահմանադրությունը, վոչ թե ժողովրդի բարորության ու լուսավորության մասին է հոգում, այլ նրա հիմարացման և այն կազմակերպությունների մասին, վորոնք կիրառում են այդ հիմարացումը: Այդ մասին է խոսում լեհական սահմանադրության նաև 113-րդ հոդվածը:

Այստեղ մանրամասնորեն թվարկվում են կրոնական կազմակերպությունների իրավունքները, հատուկ ուշադրություն է դարձվում յեկեղեցական հարստությունների պահպանմանն ու կուտակմանը, կրոնական խավարամոլության տարածման համար անսահման հնարավորություններ են սահմանվում: Սահմանադրությունը կրոնական կազմակերպությունների համար միայն մեկ սահման է դնում. — կրոնական պրոպագանդան չպետք է հակասի պետության որենքներին: Սահմանադրությունը միայն մտածում է այն մասին, վոր կրոնական կազմակերպությունների դիմալի տակ հակակառավարական պրոպագանդա չարմատանա: Պետության և յեկեղեցու միջև համաձայնություն է սահմանվում. պետությունն ամեն կերպ ոգնում է կրոնական կազմակերպություններին, իսկ նրանք, իրենց հերթին, իրենց ազդեցությունն ոգտագործում են շահագործող հպարակարգի ու նրա որենքների պաշտպանության և արդարացման համար:

1935 թվի լեհական ֆաշիստական սահմանադրությունը, հատուկ կետով հաստատում է նախկին սահմանադրության այն հոդվածները, վորոնք յեկեղեցու իրավունքների և արտոնությունների մասին են խոսում: Սակայն ֆաշիստական սահմանադրությունն ինչ վոր «նոր» բան է տալիս, ավելի ճիշտը, նա կրոնական հարցում միջնադարն է վերականգնում: Կրոնը բացահայտորեն պետական իրավունքի սիստեմի մեջ է մտցվում և աստված պետական գործերում գերազույն դատավոր է ճանաչվում: Լեհական սահմանադրության 2-րդ հոդվածում հիշատակվում է, թե հանրա-

պետութեան նախագահի վրա «պատասխանատուութիւն եւ ընկած աւտօն և պատմութեան առաջ՝ պետութեան ճակատագրի համար»։ Այստեղ արդեն խոսք անգամ չի կարող լինել, վոչ խղճի ազատութեան մասին, վոչ եւ յեկեղեցին պետութիւնից բաժանելու մասին։ Պաշտօնապէս աստիճանով պետական իշխանութեան ղեկավարի դատավոր եւ հռչակվում։ Այդպիսով յեկեղեցու և պետութեան միութիւնն անքակտելի յե հայտարարվում։

Ավստրիական 1934 թ. սահմանադրութեան մեջ կարգադրվում է, վոր քաղաքացիները պարտավորաբար ներկա լինեն յեկեղեցական արարողութիւններին «հասարակական ծառայութեան ձևով»։ Կրօնական կազմակերպութիւններին իրավունք ե տրված դրամական դանձումներ կատարել և պահանջելու այլ պարտիքներ կատարել։ Դրա համար «պետական աջակցութիւն ե ապահովվում»։ Սահմանադրութիւնը քաղաքացիներին յեկեղեցու վոստիկանական հսկողութեան տակ ե դնում։ «Որինական ճանաչված յուրաքանչյուր յեկեղեցի ու յուրաքանչյուր կրօնական ընկերութիւն իրավագոր ե իր հետևորդներին կրօնական դաստիարակութիւն տալու և նրա վրա անմիջական հսկողութիւն իրագործելու»։ 31-րդ հոդվածի կետում յերեխաների պարտադիր կրօնական դաստիարակութիւն ե առաջադրվում։ «... Պետութեան վրա հատկապէս խնդիր ե դրվում հետևելու, վոր յերեխաները կրօնական — բարոյական վոգով դաստիարակվեն...»։ Կաթոլիկական յեկեղեցուն և ուրիշ կրօնական կազմակերպութիւններին գույքերի, գանազան հիմնարկների, ձեռնարկների և այլ սեփականութիւնների իրավունք ե ապահովվում։ Բացի այդ, կաթոլիկական յեկեղեցուն լայնածավալ իրավունքներ, քաղաքական ազդեցութիւն ու մեծ միջոցներ են տրվում, համաձայն պապական աթոռի և ավստրիական պետութեան միջի կոնկորդատի, վորի հոդվածները «սահմանադրական վորոշումների

ուեժ» ունեն, ինչպէս այդ մասին հատկապէս հիշատակված ե սահմանադրութեան մեջ։

Փաշխտական պետութիւնները կրօնի հարցում, ինչպէս և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, ամենառեակցիոն քաղաքականութիւն են տանում, կարվելով բուրժուական դեմոկրատիայի ամեն տեսակի մնացորդներից։ Կրօնական լավարապաշտութեան վայրենի սանձարձակութիւն, քաղաքացիների խղճի վրա գործադրած անորինակ բռնութիւններ, ամեն մի ազատամտութեան դաժանագույն վոչնչացում, դավանութեան գործերում վոստիկանական կամայականութիւն — ահա թե ինչն ե ընութադրում Փաշիգմի կրօնական քաղաքականութիւնը։

Իտալիայում ու Գերմանիայում վոչ մի սահմանադրութիւն գոյութիւն չունի։ Նախկին սահմանադրութիւնները վոտնակոխ են արված, իրենց սահմանադրութիւնների մշակման ու հրատարակման գործով Փաշիստները չեն շտապում։ Յեվ հասկանալի յե, թե ինչու։ Սահմանադրութեան մեջ բացահայտորեն Փաշիստական ինքնակամութիւն, ժողովրդի տարրական իրավունքների ճնշում հռչակելը Փաշիստներին այնքան ել ձեռնտու չե։

Փաշիստական Իտալիայում յեկեղեցու և պետութեան ամենասերտ միութիւն գոյութիւն ունի։ 1848 թվի իտալական սահմանադրութեան մեջ, վորն այժմ ել ձեականորեն գոյութիւն ունի, 1-ին հոդվածն ասում ե, «Հռոմեակաթոլիկական և առաքելական կրօնը պետութեան միակ կրօնն ե հանդիսանում։ Ներկա ժամանակում գոյութիւն ունեցող այլ դավանանքները հանդուրժելի յեն որենքի սահմաններում»¹⁾։ Յեթե իտալական սահմանադրութեան այն բոլոր հոդվածները, վորոնք գոնե դեմոկրատիայի տեսք ունեյին, Փաշիգմի կողմից վոտնակոխ են արված, ապա յեկեղեցու արտոնութիւնների մասին յեղած հոդվածը, վոչ միայն պահպանված ե, այլև գործնականում զգալիորեն լայ-

1) Конституция буржуазных стран, т. I, стр. 142.

նացել ու ուժեղացել է: Իտալական Փաշիզմը Հռոմի պապի հետ ամենասերտ կապ է հաստատել և ոգտվում է նրա որհնությունից, ամեն կերպ ոժանդակելով իր կողմից կաթոլիկական յեկեղեցուն: 1929 թվի պայմանագրի համաձայն Մուսոլինին Վատիկանի «պետության» վրա ճանաչեց պապի իշխանությունը: Այդ նույն պայմանագրով տրամադրվում էր պապին անսահման ազդեցութուն Իտալիայի դպրոցների և յերիտասարդության դաստիարակության վրա: Կաթոլիկական յեկեղեցին ել իր հերթին աղոթքներ է անում Իտալական Փաշիզմի համար, ոգտագործում է իր ամբողջ ազդեցությունը Փաշիստական դիկտատուրայի արդարացման ու պաշտպանության համար:

Իտալո-հաբեշական պատերազմի ժամանակ Պապն Իտալական Փաշիզմին և «հոգեկան» և նյութական ոգնություն եր ցույց տալիս: Պապի ղեկավարությամբ խաւարամոլների մի ամբողջ բանակ Հաբեշտանում Փաշիստական ավանտյուրայի «արդարությունն» եր գովերգում, և բավական քանակությամբ վոսկի ծախսվեց Վատիկանի նկուղներից Իտալական իմպերիալիզմին ոգնելու հաբեշական ժողովրդի դեմ կռիւլու գործում:

Հիտլերյան Գերմանիայում պետական ու հասարակական կյանքը, վոչ թե սահմանադրությամբ, վոչ թե որենքով է կարգավորվում, այլ Փաշիստական ջարդարարների կամայականությամբ: Գերմանական Փաշիզմը վոտնակոխ արեց դեմոկրատիային վերաբերող ամեն մի ակնարկ, սահմանեց արյունահեղ տեռորի ուժիմ, Փինանսական կապիտալի ամենառեակցիոն, իմպերիալիստական շրջանների բացահայտ դիկտատուրայի ուժիմ: Գերմանական Փաշիստները վոչ չընչացրին խղճի ազատության ամեն մի նմանություն և ձգտում են յեկեղեցին Փաշիստական դիկտատուրայի ծառայության տակ դնելու: Կաթոլիկական յեկեղեցու և Փաշիզմի միջև վորոչ հակասությունների առկայությունը, վորոնք վաչ թե կրոնական, այլ քաղաքական մոտիվներով են պայմանավորված, չի փոխում այն

դրությունը, վոր Փաշիզմն ամեն կերպ ոգտագործում է կրոնն ու նրա կազմակերպությունները հեղափոխական շարժման դեմ պայքարելու համար:

Փաշիստներն ազատ մտքի ամենափոքր արտահայտումը ճնշում են, խարուկների վրա ալրում են մարդկային մտքի հանճարեղ ստեղծագործությունները, ավերում են ստեղծված կուլտուրան, զազանային շովինիզմ են բորբոքում, հրեատեցության մեջ ուսական սեհարյուրակայիններին դերազանցում են, յերկրում միստիցիզմ, խավարապաշտություն ու տերտերականություն են տարածում: Այս բոլորը վորպես «իսկական կուլտուրա» և «իսկական ազատություն» և փառաբանվում:

Այն կրոնական կազմակերպությունները, վորոնք Հիտլերի աստվածայնությունն են քարոզում և որհնում են «հիտլերյան դրախտը», չտեսնված արտոնություններով ու ազդեցությամբ են ոգտվում: Փաշիստներն ամեն կերպ ամրապնդում են կրոնական կազմակերպությունների հզորությունն ու ազդեցությունը: Նրանք հին գերմանական Վոտան աստծու պաշտամունքն են տարածում, պաշտամունք, վորը նպատակ ունի պատերազմ/նախապատրաստելու դենք ծառայելու և Փաշիզմի ռեակցիոն քաղաքականության դենքն է հանդիսանում: Անաստվածական, հակակրոնական պրոպագանդան դաժանորեն հալածվում է: Յեկեղեցուն՝ գրականության, կինոյի, թատրոնների ու ռադիոյի միջոցով ռեակցիոն պրոպագանդայի համար անսահմանափակ հնարավորություններ են տրված: Փաշիստները տերտերների հետ միացած աշխատավորական մասսաներին վոչ միայն սանճարձակ տեռորով, կացնով համակենտրոնացման ճամբարներով ու բանտերով են ճնշում, այլև կրոնական խավարապաշտության շղթաներով: Փաշիստները ջախջախում են այն կրոնական կազմակերպությունները, վորոնք չեն ուզում Հիտլերին աստծու ներկայացուցիչը ճանաչել: Փաշիստներն ստիպում են հավատացյալներին այդպիսի

կազմակերպութիւններէց զուրա գալ, դաժանորեն հալածելով այն հոգեվորականութեանը, վորը համաձայն չէ Փաշիգմի կրօնական քաղաքականութեան հետ: Հիտլերյան ջարդարարները ծաղրում են քաղաքացիներէ խղճի ազատութիւնը:

Բուրժուական դեմոկրատիայի սահմանադրութիւնը խղճի իսկական ազատութիւն չի ապահովում, Փաշիգմը բացահայտորեն ճնշում է խղճի ազատութիւնը և բռնաբարում է աշխատավոր մասսաների խիղճը: Միայն պրոլետարական պետութիւնն է կրօնական հարցի իսկական դեմոկրատական լուծումն ապահովում: Պրոլետարական պետութիւնը դեմոկրատիայի բարձրագույն տիպն է: Միայն նա յէ իսկական դեմոկրատիա և խղճի իսկական ազատութիւնն ապահովում:

Կրօնական հարցի իսկական դեմոկրատական լուծման առաջին փորձը փարիզյան Կոմունան արեց: 1871 թվի ապրիլի 2-ի գեկրետով Կոմունան անջատեց յեկեղեցին պետութիւնից, պաշտամունքների պետական բյուջեն վերացրեց և յեկեղեցական միավորումների անշարժ գույքն ազգային սեփականութիւն հայտարարեց:

«Կոմունան, — գրել է Մարքսը, — անմիջապես խնամք տարավ այն մասին, վորպեսզի հոգևոր ճնշման ուժը «տերտերի իշխանութիւնը» կտորի նրանով, վոր ցրեց ու սեփականազրկեց բոլոր յեկեղեցիները, վորպես սեփականատիրական կազմակերպութիւններ... Բոլոր ուսումնական հիմնարկները բաց ելին ժողովրդի համար ձրի և միաժամանակ ազատվեցին յեկեղեցու և պետութեան արտաքին միջամտութիւնից»¹⁾:

Փարիզյան Կոմունան չհասցրեց իր գեկրետները կյանքում անցկացնել: Հակահեղափոխական բուրժուազիան դադանային հաշվեհարդար արեց փարի-

զյան պրոլետարիատի հետ, վոչնչացրեց Կոմունայի իսկական դեմոկրատական բարեփոխութիւնների ամեն մի հետք:

Հերոսական Կոմունարներէ դործի շարունակողը հանդիսացավ խորհրդային պետութիւնը, վորը բոլշեվիկյան կուսակցութեան գեկավարութեամբ աճել ու ամրացել է շահագործողների իշխանութեան տապալման հետևանքով: Պրոլետարական պետութիւնն աշխատավոր մասսաներին ազատեց յեկեղեցուց պետական կախում ունենալուց: Ժողկոմխորհի 1918 թ. հունվարի 23-ի գեկրետով յեկեղեցին անջատվեց պետութիւնից ու դպրոցը՝ յեկեղեցուց: Յեկեղեցական արարողութիւնները պետական և հասարակական գործողութիւններից վտարվեցին, դրանով իսկ վերացվեց կրօնական արարողութիւնների պարտադրութիւնը բոլոր քաղաքացիների համար: Կրօնական արարողութիւնների կատարումը դարձավ կամավոր: Վերացվեց քաղաքացիների խղճի բռնութիւնը:

Առաջին խորհրդային Սահմանադրութիւնը, վորը հաստատվեց խորհուրդների Համառուտական 5-րդ համագումարում, կրօնական հարցում խղճի իսկական ազատութիւն հայտարարեց: Սահմանադրութեան 13-րդ հոդվածում ասված է. «Աշխատավորութեան վերաբերմամբ խղճի իսկական ազատութեան ապահովման նպատակով յեկեղեցին բաժանվում է պետութիւնից և դպրոցը՝ յեկեղեցուց, իսկ կրօնական ու հակակրօնական պրոպագանդայի ազատութիւնը ճանաչվում է բոլոր քաղաքացիների վերաբերմամբ»: Խորհրդային հանրապետութեան մեջ խղճի ազատութիւնը ունալ կերպով ապահովվում է նրանով, վոր յեկեղեցին անջատված է պետութիւնից, զրկվում է պետական ոգնութիւնից ու նրանով, վոր քաղաքացիների վերաբերմամբ դավանութեան ու հակակրօնական պրոպագանդայի ազատութիւն է ճանաչվում: Բուրժուական սահմանադրութիւններից վոչ մեկում հակակրօնական պրոպագանդայի ազատութիւն չի սահմանված:

¹⁾ К. Маркс, „Гражданская война во Франции“, Архив Маркса и Энгельса, т. VIII, стр. 41.

Մինչդեռ, առանց ինչ կրոնից ուզում ե լինի, հրաժարվելու ազատութեան, և առանց հակակրոնական համոզմունքների պրոպագանդայի ազատութեան, չի կարող լինել նաև՝ խղճի ազատութիւն: Ինչ խղճի ազատութիւն կարող ե լինել, յերբ պետութիւնը կրոնական խաղաղապաշտութեան պրոպագանդային ոժանդակում ե, յետե նա քաղաքացիներէից վորեւե կրոնի պարտադիր պատկանելիութիւն ե պահանջում ու ճնշում ե հակակրոնական պրոպագանդան:

1929 թվի մայիսին Խորհուրդների Համառուսական 14-րդ համագումարում ՌԽՍՖՀ-ի սահմանադրութեան խղճի ազատութեան մասին հոգւածի խմբագրութիւնը ձևափոխեց: Կրոնական պրոպագանդայի ազատութեան փոխարեն, քաղաքացիներէի վերաբերմամբ դավանութեան ազատութիւն ճանաչեց: Այդ փոփոխութիւնն արդիւնք եր այն բանի, վոր յեկեղեցականները չափազանց լայն ձևով բացատրեւ լով կրոնական պրոպագանդայի ազատութիւնը, անբեւտարար բնակչութեանը, նամանավանդ յերիտասարդութեանն ու յերեխաներին, կրոնական նախապաշարմունքներ եյին պատվաստում և կրոնական պրոպագանդայի դրոշի տակ հակախորհրդային պրոպագանդա եյին մղում: Վոչ մի չափով չսահմանափակելով խղճի ազատութիւնը, այդ փոփոխութիւնը ճշգրտեց խղճի ազատութեան հարցը: Ստալինյան Սահմանադրութիւնն այդ հարցում լրիւ պարզութիւն ե մըտցնում:

Սահմանադրութեան 124-րդ հոգւածը հայտարարում ե. «Քաղաքացիներէի համար խղճի ազատութիւն ապահովելու նպատակով յեկեղեցին ԽՍՀՄ-ում բաժանված ե պետութիւնից և դպրոցը՝ յեկեղեցուց: Կրոնական պաշտամունքների կատարման ազատութիւնը և հակակրոնական պրոպագանդայի ազատութիւնը ճանաչվում ե բոլոր քաղաքացիներէի համար»:

ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի կարող

ե դավանել ուղած կրոնը: Յեկեղեցին բաժանված ե պետութիւնից: Հավատքի դործերում վոչ մի ստիպողականութիւն չի թույլատրւում վոչ իշխանութեան մարմիններէի կողմից, վոչ ել կրոնական կազմակերպութիւնների կողմից: Կրոնական պաշտամունքների սպասափորները քաղաքացիներին այս կամ այն դավանանքը փաթաթել և նամանավանդ կրոնով քողարկվելով հակախորհրդային պրոպագանդա տանել, չեն կարող: Կրոնական պաշտամունքների կատարման ազատութիւնը, ինչպես և հակակրոնական պրոպագանդայի ազատութիւնը ճանաչվում ե Սահմանադրութեամբ:

Պետութիւնը վոչ մի կրոնի նախապատվութիւն և ոժանդակութիւն չի ցույց տալիս և վոչ մի դավանութիւն չի ճնշում: ԽՍՀՄ-ում «հավատքը հալածվելու» մասին յեղած ամեն տեսակի առասպելները կոպիտ հակախորհրդային բամբասանքներ են հանդիսանում: Կուսակցութեան ծրագրում ու կուսակցական համագումարներէի վորոշումներում մատնանշվում ե, վոր անհրաժեշտ ե խնամքով խուսափել հավատացյալների զգացմունքներն ամեն կերպ վիրավորելուց, վորը սոսկ դեպի կրոնական Փանատիզմի ամբացումն ե տանում: Կուսակցութիւնը խիստ ձգում եր այն յեռանդուն աղմինիստրատորներին, վորոնք տրամադրվել եյին վարչական միջոցներով վերջ դնել կրոնին: Հայտնի յե, վոր յեկեղեցու փակումը, ըստ խորհրդային որենքների, կարող ե կատարվել միայն բնակչութեան մեծամասնութեան վորոշումով: Առանց բնակչութեան պարզ արտահայտված ցանկութեան իշխանութեան մարմինները թույլ չեն տալիս յեկեղեցիներ փակել: Կրոնական հավատքի դործերում վորեւե բռնութիւն հիմնովին կերպով հակասում ե Մարքսիզմի-Լենինիզմի ուսմունքին: Բուլչեվիկյան կուսակցութիւնը ձգտում ե կրոնական նախապաշարմունքների վերացմանը, սակայն նա համոզված ե, վոր կրոնը բռնութեամբ չի կարելի արմատախիլ անել: Կրոնն իր

արմատներն ունի հասարակական կյանքում: Շահագործողական հասարակության մեջ կրոնի հիմքը, արմատը, արտաքին բնության ու դասակարգային հարմարահարման կողմից մարդկանց ճնշվածությունն էր հանդիսանում: Անհնար է կրոնը հաղթահարել առանց մարդը մարդուն չահագործելը վոչնչացնելու:

Կրոնականության անկումը, հակակրոնական պրոպագանդայի հաջողությունները և անաստվածությունը աճը ԽՍՀՄ-ում հենց նրանով է բացատրվում, վոր մեր յերկրում հաղթանակեց սոցիալիզմը, պրոտածույժ դասակարգերը վոչնչացվեցին, մարդը-մարդուն չահագործելը գոյություն չունի, արմատապես լավացել է աշխատավորության նյութական դրությունը, անչափ աճել է նրա կուլտուրական մակարդակը: Կրոնի արմատներն արմատահան անելու միջոցով, կրոնական հավատքի նկատմամբ առանց վորեւե բռնություն գործադրելու ազդարնակչության լայն մասսաները սոցիալիստական շինարարության ակտիվ աշխատանքի ներգրավելու միջոցով, գիտական հասկացողությունների լայն պրոպագանդի, մասնավորապես հակակրոնական պրոպագանդի ոգնությունը, կուսակցությանը հաջողվեց տասնյակ միլիոնավոր աշխատավոր մասսաներին խել կրոնի հակահեղափոխական ազդեցությունից:

Ստալինյան Սահմանադրությունը, խղճի ազատություն յերաշխավորելով, դավանությունից ազատություն է ապահովում: Հակակրոնական պրոպագանդայի ժամանակ պետք է բացատրել, վոր կրոնական համոզումների նկատմամբ բռնությունը, վորը բնորոշ է բուրժուական պետությունների և հատկապես Փաշիզմի համար, խորհրդային պետության քաղաքականությունը չի համապատասխանում:

Խորհուրդների Արտակարգ 8-րդ համագումարում քնն. ՍՍՍՀԽՍՀ Սահմանադրության նախագծի 124-րդ հոդվածին վերաբերող ուղղման առթիվ մատնանչեց, վոր կրոնական արարողությունների կատարման արգելումը չի համապատասխանում մեր Սահմանադրության

վոգույն: «Այնուհետև — ասում է քննիչ ՍՍՍՀԽՍՀ — գալիս է Սահմանադրության նախագծի 124-րդ հոդվածի վերաբերյալ մի ուղղում, վորը անհանջում է փոփոխել այդ հոդվածն այն ուղղությամբ, վորպեսզի արգելի կրոնական ծեսերի կատարումը: Յես կարծում եմ, վոր այս ուղղումը հարկավոր է մերժել՝ վորպես մեր Սահմանադրության վոգույն չհամապատասխանող»¹⁾:

Սակայն կրոնական պաշտամունքի կատարման ազատության հարցի բացատրությունը չի սպառում խղճի ազատության հարցը: Դավանությունների ազատություն ճանաչելով հանդերձ, խորհրդային պետությունը չի կարող հաշտվել կրոնական նախապաշարմունքների հետ:

Պրոլետարական պետության քաղաքականությունը կրոնական հարցում լիովին բղխում է բանվորական կուսակցության դեպի կրոնն ունեցած վերաբերմունքի մասին Մարքսիստական-Լենինյան ուսմունքից: Մարքսիզմ-Լենինիզմը սովորեցնում է, վոր կրոնը ժողովրդի ուղիումն է, վոր «արդի բոլոր կրոններն ու յեկեղեցիները բուրժուական ռեակցիայի մարմիններ են, վորոնք ծառայում են չահագործման պաշտպանությունն ու բանվոր դասակարգին չամեցնելուն»: Բուլչեվիկյան կուսակցությունն իր ձեւավորման առաջին քայլերից յեկեղեցին պետությունից բաժանելու պահանջ առաջադրեց:

Սակայն, պահանջելով յեկեղեցու պետությունից լիակատար բաժանումը, Լենինը մատնանչում էր, վոր պրոլետարական կուսակցության նկատմամբ կրոնը մասնավոր գործ չէ, ինչպես այդ հոչակում է յին սոցիալ-դեմոկրատիայի ոպորտունիստական առաջնորդները: Կուսակցությունը չի կարող կրոնական խավարամոլությունն անտարբեր վերաբերվել: Կուսակցություն-

¹⁾ Ի. Ստալին, «ԽՍՀՄ Սահմանադրության նախագծի մասին», Կուսհրատ, 1936 թ., էջ 42—43:

ներ հակակրոնական պրոպագանդա յե կազմակերպում, պայքար ե մղում կրոնի ռեակցիոն ազդեցության դեմ: «Մենք,— ասում ե Լենինը,— պահանջում ենք յեկեղեցու լիակատար անջատումը պետությունից, վորպեսզի պայքարենք կրոնական մշուշի դեմ գուտ գաղափարական ու միմիայն գաղափարական գենքով, մեր մամուլով, մեր խոսքի միջոցով»¹⁾:

Ընկեր Ստալինը դեռ 1913 թվին կրոնի հարցի մասին բուլչեվիկյան դիրքի բացառիկ պարզորոշ բացատրություն տվեց: Նա մատնանշում եր, վոր կուսակցության ծրագրին իր մեջ դաժանության ազատության մասին կետ ե պարունակում: Համաձայն այդ կետի մարդկանց ամեն մի խումբ կարող ե դաժանել ցանկացած կրոնը. կաթոլիկություն, ուղղափառություն ե այլն: Կուսակցությունը կպայքարի ամեն տեսակի կրոնական ռեպրեսիաների դեմ, ուղղափառներին, կաթոլիկներին, բողոքականներին հալածելու դեմ: Սակայն այս նշանակում ե վոր կաթոլիկությունը, բողոքականությունը ե այլն... կուսակցության ծրագրին չեն հակասում: Վոչ, չի նշանակում: «Սոցիալ-դեմոկրատիան,— գրում եր Ընկեր Ստալինը,— միշտ բողոքելու յե կաթոլիկությունն ու բողոքականությունը հալածելու դեմ, նա միշտ պաշտպանելու յե ազգերի իրավունքը՝ դաժանելու ցանկացած կրոնը, բայց նա, միևնույն ժամանակ, յե՛նեկով պրոլետարիատի ճիշտ ըմբռնված շահերից, ագիտացիա յե մղելու թե կաթոլիկության, թե բողոքականության ե թե ուղղափառության դեմ՝ նրա համար, վորպեսզի սոցիալիստական աշխարհայացքի հաղթանակն ապահովի»²⁾:

Խորհրդային Միության մեջ խղճի ազատության հարցը Լենինի ե Ստալինի ցուցմունքներին ճիշտ համապատասխան ե լուծվում: Ստալինյան Սահմանա-

դրությունը, կրոնական պաշտամունքի կատարման ազատություն ճանաչելով, յուրաքանչյուր քաղաքացուն իրավունք ե տալիս վոչ միայն անհավատ լինելու, վոչ մի կրոն չդավանելու, այլև պայքար մղելու ամեն տեսակ կրոնի դեմ, անարգել հակակրոնական պրոպագանդա մղելու: Հակակրոնական պրոպագանդայի ժամանակ անհրաժեշտ ե բացատրել ե ամբողջ ուժով չե՞տե՞լ, վոր խորհրդային պետությունը վոչ թե նրա համար ե ճանաչում կրոնական ծեսերի կատարման ազատությունը, վոր ինքն անվնաս ե համարում դրանք, վոր ինքն անտարբեր ե վերաբերվում այդ ծեսերին, այլ նրա համար, վոր նա յուրաքանչյուր քաղաքացուն իրեն ե թողնում վորոշելու իր վերաբերմունքի հարցը դեպի կրոնը:

1927 թվին առաջին ամերիկյան բանվորական պատվիրակության հետ ունեցած զրույցում Ընկեր Ստալինը հայտարարեց, թե կուսակցությունը չի կարող չեզոք լինել կրոնի նկատմամբ:

«Մենք պրոպագանդա յենք մղում ու պրոպագանդա յենք մղելու կրոնական նախապաշարմունքների դեմ: Յերկրի որենսդրությունն այնպես ե, վոր ամեն մի քաղաքացի իրավունք ունի դաժանելու իր ցանկացած կրոնը: Դա յուրաքանչյուրի խղճի դործն ե: Հենց այս պատճառով ե, վոր մենք կիրառել ենք յեկեղեցու բաժանումը պետությունից: Բայց կիրառելով յեկեղեցու բաժանումը պետությունից ու դաժանանքի ազատություն հռչակելով՝ մենք դրա հետ մեկտեղ յուրաքանչյուր քաղաքացու իրավունք ենք վերապահել համոզելու միջոցով, պրոպագանդայի ու ագիտացիայի միջոցով պայքարելու այս կամ այն կրոնի դեմ, ամեն մի կրոնի դեմ»³⁾:

Մինչդեռ մեր պրոպագանդիստները, բացատրելով խղճի ազատության հարցը, հաճախ սահմանափակվում են ցույց տալով այն, վոր Սահմանադրությունը կրո-

¹⁾ Ленин, Соч., том VIII стр. 421.

²⁾ И. Сталин, „Марксизм и национально-колониальный вопрос“, стр. 39, изд. 1934 года.

³⁾ И. Сталин. „Вопросы Ленинизма“, изд. 10-е, стр. 192.

նական պաշտամունքի կատարման ազատութիւնն է ապահովում և հարկավոր չափով չեն չեղում այն բանը, վոր կուսակցութիւնն ու խորհրդային պետութիւնը չեն կարող անտարբեր վերաբերվել կրոնական սնահավատութեանը, վոր Սահմանադրութիւնը հակակրօնական պրոպագանդայի ազատութիւնն է յերաշխափութում:

Հասկանալի յէ, վոր յեկեղեցականները Սահմանադրութիւնն իրենց ուզածի պէս «մեկնաբանելով», վոչ միայն հակակրօնական պրոպագանդայի ազատութեան հարցին չեն մոտենում, այլև ձգտում են Սահմանադրութիւնը պատկերացնել վորպէս կուսակցութեան և խորհրդային պետութեան քաղաքականութեան չրջադարձ՝ կրօնի նկատմամբ, վորպէս խորհրդային իշխանութեան հաշտութիւն կրօնական նախապաշարումների հետ:

Լենինգրադի մարզի Ակուլովսկի շրջանում տերտերները «բացատրել» են, վոր Սահմանադրութեան 124-րդ հոդովածը, իբր թէ վկայում է այն մասին, վոր «խորհրդային քաղաքացիները հաշտվել են աստծու հետ»:

Իվանովսկի մարզի Կուրովսկի շրջանի Միսցեվե գյուղում յեկեղեցականները ներշնչել էին Դորոխովյան խմբակի Փարբիկի բանվորներին, թէ Սահմանադրութեան մեջ «այնտարանական շատ բան կա, և այդ պատճառով հարկավոր է համատաքայներին խորհուրդներում ընտրել, վորովհետեւ նրանք յերկտակ կը պահպանեն Սահմանադրութիւնը»:

Մոսկվայի մարզի Ուխտոմսկի շրջանի Կոտելնիկի գյուղում տերտերն ու յեկեղեցու յերեցվորսը համատաքայներին «բացատրում են», թէ «աստված խելքի բերեց բոլշևիկներին, նրանք այժմ ուշքի յեն յեկել, ուրեմն պատրաստվենք խորհուրդների ընտրութիւններին և ընտրենք մեր համատաքայլ մարդկանց»:

Ի՞նչի վրա յեն հիմնված խորհրդային իշխանութեան կրօնի հետ հաշտութեան մասին տերտերական

հորինվածքները: Այդ հորինվածքների համար վոչ մի ռեալ հիմքեր, իհարկէ, չկան: Այդ հորինվածքները Ստալինյան Սահմանադրութեան աղավաղված մեկնաբանութեամբ են հիմնավորվում: Յեկեղեցականները խորհրդային պետութեան կրօնի հետ հաշտութիւն հաստատելն առաջին հերթին հիմնավորում են նրանով, վոր նոր Սահմանադրութիւնը կրօնական պաշտամունքի կատարման ազատութիւնն է ճանաչում: Բայց չէ՞ վոր նախկին սահմանադրութեան մեջ ել եր դավանութեան ազատութիւնն ճանաչված: Չէ՞ վոր Սահմանադրութիւնը նաև հակակրօնական պրոպագանդայի ազատութիւնն է ճանաչում բոլոր քաղաքացիների համար, հետեւաբար խորհրդային իշխանութեան վոչ մի հաշտութիւն չկա կրօնի հետ և չի կարող լինել:

Յեկեղեցականների խորհրդային իշխանութեան կրօնի հետ հաշտութեան մասին իրենց հորինվածքների մյուս ապացույցն այն է, վոր նրանք մեջ են բերում այն, թէ ըստ նոր Սահմանադրութեան տերտերներին ընտրական իրավունքեր են տրված, վորոնցից առաջներում նրանք զուրկ էին:

Գորկու յերկրի Կովերնինսկի շրջանում Սվիգի գյուղի տերտերն իր քարոզում համատաքայներին հայտարարեց. «Յեղրայրնե՛ր. Ամբողջ աշխարհի համար յերջանիկ օրեր են յեկել: Ո՞վ էյի յես առաջներում: Չայնազուրկ էյի: Ամենավերջին մարդն էյի: Իսկ այժմ ինձ ել են ազատութիւն տվել, ինձ ել են խորհուրդ կանչում»:

Պարզ է, վոր յեկեղեցականների այս «ապացույցն» ել վոչ մի հիմք չունի:

Պաշտամունքի սպասավորներին անցյալում ընտրական իրավունքներից զրկելը, չեր նշանակում խղճի աթեան սահմանափակում կամ կրօնական համատքի ճրջում: Այդ զրկումը բղխում եր դասակարգային պայքարի պայմաններից, չահագործող դասակարգերի ճնշման անհրաժեշտութիւնից, վորոնք փորձ էին անում տապալել խորհրդային իշխանութիւնը և վերա-

կանգնել շահագործողական հասարակարգը: Սահմանադրութիւնն անաշխատ շահագործող տարրերին, կապիտալիստական կարգի մոլի պաշտպաններին ընտրական իրավունքներից զրկել եր նրա համար, վոր պեսզի դժվարացնի շահագործող դասակարգերի պայքարը խորհրդային իշխանության դեմ, սոցիալիզմի դեմ: Յեկեղեցին ու կրօնը դարերով սրբագործում եին շահագործողական հասարակարգը, պաշտամունքի սպասավորները միշտ ել անաշխատ յեկամուտով են ապրել և կապիտալի շահերին պաշտպան են կանգնել: Մեծ պրոլետարական հեղափոխության շնորհիվ զրկվելով հսկայական հարստութիւններից ու պետական ու ժանդակութիւնից, շահագործողների իշխանության տապալման հետ մեկտեղ կորցնելով արտոնյալ դրութիւնն ու քաղաքական հզորութիւնը՝ պաշտամունքի սպասավորներն իրենց ճնշող մեծամասնությամբ Խորհրդային Միության դեմ դուրս յեկան: Հեղափոխութիւնից հետո կրօնական կազմակերպութիւնները թշնամական վերաբերմունք հայտնաբերեցին դեպի սոցիալիստական շինարարութիւնը և իրենց նվիրվածութիւնն արտահայտեցին դեպի հին կարգը, ստրկության ու շահագործման կարգը: Ահա թե ինչու պաշտամունքի սպասավորները զրկված եյին ընտրական իրավունքներից:

Այժմ, յերբ շահագործող դասակարգերը վոչնչացված են, յերբ սոցիալիզմը վերջնականապես և անվերադարձ կերպով հաղթանակել ե, յերբ բանվոր դասակարգը աճել ու ամրացել ե, իսկ գյուղացիները հսկայական մեծամասնությամբ կոլտնտեսականներ, սոցիալիզմի ակտիվ կառուցողներ են դառել, այժմ հնարավոր ե դառել ընտրութիւններն ընդհանուր դարձնել: Պաշտամունքի սպասավորներն ևս ստացան ընտրական իրավունք:

Հետեւաբար, անհեթեթութիւն ե մտածել, թե հոգեվորականութիւնն ընտրական իրավունքներ տալը կուսակցութիւն կրօնի նկատմամբ փոխած քաղաքա-

կանության արդշունք ե: Հոգեվորականության նկատմամբ ընտրական իրավունքների սահմանափակումները վերացնելով, պետութիւնն ամենեվին ել չի ընդունում, թե կրօնն ավելի քիչ վնասակար ե դառել, թե կրօնական նախապաշարմունքները համատեղելի յեն սոցիալիզմի հետ: Կրօնական նախապաշարմունքները յեղել են և մնում են, սոցիալիզմին թշնամի: Թշնամի յենաւ դիտությանն ու կուլտուրային: Իհարկէ, այժմ, յերբ սոցիալիզմը հաղթանակել ե, յերբ աշխատավոր մասսաները սարի պես կանգնած են սոցիալիստական կարգերի համար, յեկեղեցականները գունավորում են իրենց կերպարանքը: Նրանք դեմ չեն ընդունելու թե սոցիալիզմը համատեղելի յե կրօնի հետ, նրանք անգամ փորձում են իրենց ամենաառաջին սոցիալիստներ պատկերացնել:

Իվանովսկի մարզի Կուրովսկի չրջանի Բոգոուդսկ գյուղում տիրացու Սպիրիդովը հավատացնում ե հավատացյալներին, թե Քրիստոսը կոմունիստ ե, և բոլոր նրանք, ովքեր նրա ուսմունքին հետևում են, նրանք իսկական կոմունիստներ են, հետեւաբար խորհուրդներում միայն հավատացյալներին պետք ե ընտրել:

Պարզ ե, վոր քրիստոնեութիւնը կոմունիստական ուսմունք, իսկ տերտերներին սոցիալիստներ պատկերացնելու փորձերը, ուսկիցիոն դատարկախոսութիւն են հանդիսանում այն հաշվով, վորպեսզի տերտերական ցանցերում պահեն հավատացյալ աշխատավորութիւնը, վորը համոզվել ե սոցիալիստական հասարակարգի առավելութիւններում ու առում ե սոցիալիզմի թշնամիներին:

Սակայն սխալ կլիներ աչքերը փակել և այդ տերտերական դատարկախոսութիւն մոտով անցնել, համարելով այն ուշադրության վոչ արժանի: Հակակրօնական պրոպագանդան պետք ե մերկացնի այդ դատարկախոսութիւնը, ցույց տա սոցիալիզմի ու կրօնի արմատական հակադրութիւնը, բաց անի գիտական աշխարհայեցողութիւնն անհաշտելիութիւնը կրօնական նախապաշարմունքների հետ:

Հետեւյալ հարցը, վորն առաջ ե գալիս Սահմանադրութեան և ընտրական օրենքի բացատրութեան կապակցութեամբ, — դա այն է, թե կարող են արդո՞ք կրօնական կազմակերպութիւնները թեկնածուներ առաջադրել աշխատավորութեան խորհուրդներում: Յեկեղեցականները բացատրում են, թե իհարկե, կրօնական կազմակերպութիւններն իրավունք ունեն թեկնածուներ առաջադրելու և վոչ միայն բացատրում են, վորոչ տեղերում նույնիսկ արդեն իրենց թեմարկայաներին վորպէս թեկնածուներ են առաջադրում խորհուրդներում:

Իմանովսկի մարզի Կուրովսկի շրջանի Զապոնորյե գյուղում յեկեղեցական ակտիվիստները շրջել են ավանում ու ագիտացիա յեն տարել տերտերին շրջանային խորհուրդ առաջադրելու համար: «Նոր տերտերը, — ասում է յին նրանք, — և գլխով ե, և ընդունակ, նա հավատացյալներին և անհավատներին կարող ե հարգել»:

Վելիկո-Ուստյուգսկի շրջանի Շչեկինսկի գյուղխորհուրդում յեկեղեցականները վորոշել է յին փորձել իրենց ուժերն ու խորհրդի գալիք ընտրութիւնների «փորձ» անցկացնել: Այդ նպատակով նրանք կոլտնտեսականներին համոզել է յին՝ Լիովինովի անվան կոլխոզի նախագահին վերընտրելու: Ընտրութիւնների արդեւոյն այն յեղով, վոր սաղմոսասացը կոլտնտեսութեան նախագահ դարձավ:

Հակակրօնական պրոպագանդայում անհրաժեշտ ե բացատրել, վոր կրօնական կազմակերպութիւնները խորհուրդներում իրենց թեկնածուներն առաջադրելու իրավունք չունեն և հասկանալի ձեւով ընակչությանը, մանավանդ հավատացյալներին, բացատրել, թե ինչու կրօնական կազմակերպութիւններին այդ իրավունքը չի տրվում:

Ընտրական օրենքում թեկնածուների առաջադրման կարգի մասին ասված ե հետեւյալը. «Հոդ. 56. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի թեկնածուներ առաջադրելու իրավունքը ԽՍՀՄ-ի Սահմանադրութեան 141-րդ հոդովածի

հիման վրա ապահովվում ե աշխատավորների հասարակական կազմակերպութիւնների և ընկերութիւնների՝ կոմունիստական կուսակցական (կազմակերպութիւնների, արհեստակցական միութիւնների, կոպերատիվների, յերիտասարդութեան կազմակերպութիւնների, կուլտուրական ընկերութիւնների և այլ կազմակերպութիւնների համար, վորոնք գրանցված են օրենքով սահմանված կարգով»:

Ինչպէս տեսնում ենք, այստեղ կրօնական կազմակերպութիւնները չեն հիշատակվում այն կազմակերպութիւնների թվում, վորոնք իրավունք ունեն թեկնածուներ առաջադրել Գերագույն խորհուրդում: Նրանք, իհարկե, չեն մտնում նաեւ «այլ կազմակերպութիւնների թվի մեջ, վորոնք արձանագրված են օրենքով սահմանված կարգով», վորոնց մասին ընտրական օրենքում խոսվում ե, վորպէս այնպիսի կազմակերպութիւնների, վորոնք խորհուրդներում թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն: Կրօնական միութիւններ գոյութիւն ունեն միայն մի վորոշակի նպատակի՝ կրօնական պաշտամունքի կատարման համար: Կրօնական միութիւններին և խմբերին ուրիշ վոչ մի տեսակի Ֆունկցիաներ չեն կարող հատկացվել: Նրանք չունեն կանոնադրութիւն, իրավաբանական անձի իրավունքներ: Հետեւաբար կրօնական կազմակերպութիւնները Գերագույն խորհուրդ թեկնածուներ առաջադրելու իրավունք չունեն: Մեր յերկրում յեկեղեցին բաժանված ե պետութիւնից: Պետութիւնը չի խառնվում կրօնական դավանանքների դործերում ու կրօնական կազմակերպութիւններն իլ չպետք ե պետական դործերում խառնվեն: Ստալինյան Սահմանադրութեամբ թեկնածուների առաջադրման իրավունք տալահովում ե հասարակական կազմակերպութիւնների և աշխատավորական ընկերութիւնների համար: Կրօնական միութիւնները աշխատավորական կազմակերպութիւններ ու ընկերութիւններ ճանաչվել չեն կարող: Չնայած, վոր կրօնական միութիւններում բաղական հավատացյալ աշխատավորներ կան, սակայն իրենց ե-

յությամբ կրօնական կազմակերպությունները թշնամի յեն աշխատավորության շահերին: Պատմության ամբողջ ընթացքում կրօնական կազմակերպությունների հակաժողովրդական բնույթը նրանց նպատակներով ու պրոպագանդայով, նրանց ղեկավարությամբ ու նրանց ռեակցիոն քաղաքական գործունեյությամբ է վերջացում:

Վերոհիշյալ են կրօնական կազմակերպությունների նպատակներն ու պրոպագանդան: Դա անդրադարձնում է առաջադրության քարոզին և, հանուն յերկնային ազատության՝ յերկրային կյանքի բարեխալման համար մղվող պայքարից հրաժարվելու քարոզին: Ո՞ւմն է ոգտակար և ումն է վնասակար այդ քարոզը:

Նա ոգտավետ է շահագործողներին, վերոհիշյալ մինչև Հոկտեմբերյան հեղափոխութունը մեր յերկրում տիրապետում էին, իսկ բուրժուական յերկրներում այժմ էլ տիրապետում են կյանքի բոլոր բարիքներին, նա նրանց ոգտավետ է նրանով, վեր ոգնում է իրենց ժողովրդական մասսաներին ստրկության ու յստիարի մեջ պահելու գործում: Այդ քարոզը վնասակար է աշխատավորությանը, վերոհիշյալ նրանց կենսական շահերը սոցիալիզմի հետագա հաջողությունների համար, յերջանիկ կյանք կառուցելու համար մղվող պայքարումն են գտնվում, իսկ կրօնական քարոզը իսնագարում է այդ պայքարին և սոցիալիզմի թշնամիների գենքն է հանդիսանում:

Ինչո՞ւ պիտի յ կրօնական կազմակերպությունների ղեկավարությունը: Այդ կազմակերպության գլխին կանգնած են տերտերներն ու աղանդավորական քարոզիչները, այդ կազմակերպությունների ղեկավարները աշխատավորությանը թշնամի տարրեր են: Պարզ է, վեր կրօնական կազմակերպությունների ղեկավարությունը չի կարող աշխատավորության շահերի մասին մտածել, պարզ է, վեր նա տարել ու տանում է աշխատավորության շահերին հակադիր գիծը:

Ինչո՞ւ պես էր մինչև ներկա ժամանակը կրօնական

կազմակերպությունների քաղաքական գործունեյությունն ու դերը: Հայտնի յե, վեր կրօնական կազմակերպությունները միշտ էլ ծառայում էին շահագործողների շահերին, ժողովրդի հեղափոխական, ազատագրական շարժման դեմ էին պայքարում, դիտության ու կուլտուրայի թշնամիներ էին: Բավական է մեջ բերել յեկեղեցու և բոլոր կրօնական կազմակերպությունների հակահեղափոխական դերը 1905 թ. հեղափոխության ժամանակ, Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ու քաղաքացիական պատերազմի ժամանակ, դյուղատնտեսության ինդուստրացման ու կուլիկտիվացման շրջանում, վերպեսդի ապացուցենք կրօնական կազմակերպությունների հակաժողովրդական, ռեակցիոն էյությունը:

Հետեւաբար կրօնական կազմակերպությունները աշխատավորության կազմակերպություններ չեն հանդիսանում, չնայած վեր նրանց կազմի մեջ մտնում են և աշխատավոր հավատացյալներ: Կրօնական միությունները աշխատավորության կազմակերպությունների իրավունքներ, մասնավորապես, Խորհուրդներում թեկնածուներ առաջադրելու իրավունքներ չունեն:

Այս բոլորը հարկավոր է լայնորեն բացատրել բնակչությանը և, հատկապես, հավատացյալներին: Հակակրօնական պրոպագանդում հարկավոր է բացատրել, թե կրօնական միությունները դյուլություն ունեն միայն կրօնական ծեսեր կատարելու համար, վեր նրանք վոչ մի ուրիշ ֆունկցիաներ չպետք է յուրացնեն:

Յուրաքանչյուր հավատացյալի անհրաժեշտ է բացատրել, վեր, յեթե կրօնական կազմակերպությունները Խորհուրդներում թեկնածուներ առաջադրելու իրավունքներ չունեն, ապա դա չի նշանակում, թե հավատացյալները, վերպես Խորհուրդային Միության քաղաքացիներ, չեն կարող աւտիվ մասնակցություն ունենալ թեկնածուների առաջադրմանը: Վերպես իրավահավասար քաղաքացիներ նրանք կարող են և

պետք է մասնակցեն թեկնածուների առաջադրմանը՝ այն կազմակերպությունների միջոցով, վերոնց անդամներն են հանդիսանում և վերոնց թեկնածուներ առաջադրելու իրավունք է տրվում, այսինքն, արհմիութենական, կոոպերատիվ և ուրիշ կազմակերպությունների միջոցով: Հավատացյալներն անհավատներին հետ միասին կարող են անմիջականորեն թեկնածուներ առաջադրել բանվորների, կոլտնտեսականների, ծառայողների և կարմիր բանակայինների ժողովներում ըստ ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, հիմնարկությունների և գլխավորական մասերի:

Ընտրական օրենքում ասված է՝ «Հոդ. 57. Թեկնածու պաշտոնները իրավունքն իրականացնում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ինչպես կենտրոնական որդանները, նույնպես և նրանց հանրապետական, յերկրային, մարզային ու շրջանային որդանները, հավասարապես և բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները ձեռնարկություններում, կարմիր բանակայինների ընդհանուր ժողովները գործմասերում, ինչպես և գյուղացիների ընդհանուր ժողովները—կոլտնտեսություններում, խորհրդատեսությունների բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները — խորհրդատեսություններում»:

ԽՍՀՄ-ի ընտրական սխառեմն աշխարհում ամենադեմոկրատիկ սխառեմն է: Ինչպես անհավատները, այնպես էլ հավատացյալներն անկախ իրենց զավանանքից ամենադեմոկրատիկ ընտրական իրավունքներում են օգտվում:

Բոլշևիկյան կուսակցությունն ու խորհրդային պետությունը դեմ են դուրս գալիս բնակչությանն ըստ հավատացյալների կամ անհավատների բաժանմանը, ինչպես մեկի, նույնպես և մյուսի քաղաքական իրավունքների ճնշմանը: Միայն ժողովրդի թշնամիներին է ձեռնառու աշխատավորությանը հավատացյալ-

ների կամ անհավատների բաժանելը, իսկ մեր ուժը միության մեջ է, բոլոր աշխատավորների յեղբայրական միության մեջ՝ անկախ դավանությունից և ազգությունից:

Ընտրություններին մասնակցելու յեն ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքացիները, մասնակցելու յեն և տերտերները: Սակայն այդ չի նշանակում, թե մենք տերտերական բթացման դեմ պայքարելուց, հոգեվորականություն մեակցիոն դերի մերկացումից հրաժարվում ենք: Ընդհակառակը՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման շրջանում մենք պետք է ուժեղացնենք պայքարը կրոնական նախապաշարմունքների դեմ, պայքարը յեկեղեցական —աղանդավորական դեկավարների ուեակցիոն ազդեցություն դեմ:

Հակակրոնական աշխատանքն—այն միջոցն է, վորը պետք է մերկացնի թշնամական մարդկանց, ընտրությունների ժամանակ փակի նրանց մուտքը դեպի Խորհուրդները: Հակակրոնական պրոպագանդան, վորպես այդ ագիտացիոն աշխատանքի բաղադրիչ մասը, այնպես պետք է դրվի, վորպեսզի ժողովուրդը տերտերական—աղանդավորական լագերից թշնամի մարդկանց բաց չթողնի դեպի խորհուրդները:

Ամբողջ պատմություն փորձի վրա, այսօրվա փաստերի վրա պետք է հավատացյալներին ապացուցել, վոր տերտերական—աղանդավորական թեվարկյալները չեն կարող յեվ չեն պաշտպանի աշխատավորության շահերը, յեթե նրանք անգամ Խորհուրդները մտնեն: Տերտերները դարերով ծառայել են շահադործողներին յեվ նրանք չեն կարող աշխատավորության շահերի համար, սոցիալիզմի համար պայքարել:

Իհարկե, այժմ յերկեղեցականներն իրենց հասարակական են ձեվացնում, աշխատում են մասսաներին հարմարվել, իրենց խորհրդային իշխանություն կողմնակիցներ, աշխատավորության պաշտպաններ ցույց տալ: Այսպես, օրինակ, «Ուրալսկիյ ռարոչիյ» թերթը 1937 թ. հուլիսի 8-ի համարում հայտնում է. «Նիժնի

Սերգիյում յերկեղեցականները խորհուրդների ընտրության ակտիվ նախապատրաստություն են ծափալում: Նրանք փորձում են հասարակական աշխատանքում իրենց ակտիվիստներ ձեւացնել: Աշխատավորների հետ զրուցելով, տերտերը չեր մոռանում հարցնելու, թե ինչպես ե քաղաքացին ընտրություններին պատրաստվում՝ նոր սահմանադրության համաձայն, ինչպես ե նա կատարել իր պարտավորությունները պետության հանդեպ յեւ այլն»:

Պարզ ե, վոր տերտերների նման խորամանկություններն ամբողջովին յերկերեսանիություն են հանդիսանում ու չեն կարող ապացույց լինել այն բանի, թե տերտերները աշխատավորության շահերի համար են հոգում: Տերտերների այդ բոլոր խորամանկություններն անհրաժեշտ ե ջախջախել, ցույց տալ նրանց իսկական հակափողովորդական եյությունը:

Մարտնչող անսատվածների Միության կազմակերպությունները պետք ե ամենալայն հակակրօնական պրոպագանդա ծավալեն ու կազմակերպչորեն բազմակողմանի մասսայական աշխատանքի հիման վրա աճեն ու ամրանան: Յերկրի ամբողջ ազգարնակչությունը ե հատկապես բնակչության հալատացյալ մասը պետք ե ընդգրկվի բացատրական հակակրօնական աշխատանքով: Մեր յերկրում վոչ մի քաղաքացի չպետք ե լինի, վորը չիմանա Ստալինյան Սահմանադրության ե մեր ընտրական օրենքի բովանդակությունը, վոչ մի քաղաքացի, վորն այդ բովանդակության կեկնաբանումը թշնամական ձեռքից ստացած լինի: Խորհուրդների ընտրություններն անց են կացվելու ըստ ընտրական օկրուգների ե շրջանների, ե վոչ թե ըստ ձեռնարկությունների յեւ հիմնարկությունների: Այդ կապակցությամբ հատկապես մեծ աշխատանք ե պահանջվում նաեւ ձեռնարկությունների ե հիմնարկությունների պատերից դուրս, ընտրական շրջաններում: Կոլեկտիվ ե անհատական զեկուցումներով ու զրույցներով պետք ե ընդգրկվի

ամբողջ բնակչությունը. նամանավանդ այսպես կոչվող անկազմակերպ բնակչությանը — տնային տնտեսուհիները, խնամքի տակ ապրողները ե այլն: Բնակչության այդ մասի միջեւ հակակրօնական պրոպագանդան առանձնապես հարկավոր ե, քանի վոր յերկեղեցականներն այդ մասի մեջ ե, վոր ամենից հաճախ գործում են:

Խորհուրդների ընտրությունների նախապատրաստությունը հակակրօնական աշխատանքի հիմնական բովանդակությունն ե տվյալ ետապում: Հակակրօնական պրոպագանդային պետք ե իսկական բոլշեվիկյան թափ հաղորդել: Ժողովրդի թշնամիներին, վորոնց թվում նաեւ այն թշնամիներին, վորոնք ե կրոնով են քողարկված, հարկավոր ե մերկացնել ե մինչեւ վերջը ջախջախել: «Հակակրօնական պրոպագանդան այն միջոցն ե, — ասում ե ընկեր ՍՏԱԼԻՆԸ, — վորը պետք ե մինչեւ վերջը հասցնի ռեակցիոն հոգեվորականության լիկվիդացիայի գործը»¹⁾: Մարտնչող անսատվածների Միությունը պետք ե ամեն կերպ ոգտադործի այդ միջոցը:

¹⁾ И. Сталин. „Вопросы Ленинизма,“ изд. 10-е, стр. 193.

**ՀԱՎԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈԳՆՈՅԱՆԳԱՆ ՅԵՎ
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Սոցիալիստական դաստիարակության ժամանակակից խնդիրները հիմնականում հանդուժ են խորհրդային մարդու գիտակցության մեջ կապիտալիզմի մնացորդների հաղթահարման, աշխատանքի, քաղաքացիական պայքարի, ազգությունների փոխհարաբերությունների, կնոջ նկատմամբ յեղած վերաբերմունքի և այլնի մասին յեղած հին պատկերացումները նոր, կոմունիստական հասկացողություններով փոխարինելուն:

Խորհրդային քաղաքացու գիտակցության մեջ կապիտալիզմի մնացորդները լիկվիդացիան, բոլոր հակա-ժողովրդական ազդեցությունների, հին բարքերի և նախապաշարմունքների վերջնական հաղթահարումն ու մերացումը կազմում են այսօրվա կարեւորագույն քաղաքական խնդիրը: Կոմունիստական կուսակցության գեկամարությամբ մեր խորհրդային հասարակությունը մարդկային գիտակցության վերափոխման գործում ձեռք է բերել միեկնարկ հաջողություններ: Ընկեր ՍՍՍՐ-ի ժողովուրդների Սահմանադրության նախագծի մասին աված իր գեկուցման մեջ ընդգծում էր, թե ԽՍՀՄ-ի ժողովուրդների կերպարանքն արմատապես փոխվել է: Վոչ բանվոր դասակարգը, վոչ գյուղացիությունը, վոչ ինտելիգենցիան նման չեն նրան, ինչ վոր էին կապիտալիզմի ժամանակաշրջանում: Յերկրի անտեսությունը վերափոխելով սոցիալիստական սկզբունքների համաձայն, խորհրդային հասարակությունը

միաժամանակ վերափոխում է մարդկանց գիտակցությունը, աշխարհազգացողությունը և հոգեբանությունը, նրանց պատկերացումը կյանքի, իրեն թշնամիների և բարեկամների մասին, յերջանկության և անհատական բարոյության ուղիներին մասին:

Յերեւոյ այս հոյակապ փոփոխություններից, ընկերներից վրմանք հակամետ են այսպես մտածելու— քանի վոր մենք մտել ենք սոցիալիզմի շրջանը, բոլոր մարդիկ դարձել են գիտակից քաղաքացիներ, գիտակից աշխատավորներ, հակաժողովրդական, կրոնական գանադան ազդեցությունների ամեն տեսակի բզկոցներն իրենք իրենց «կվերանան» հաղթական առաջխաղացման ընթացքում:

Միանգամայն կեղծ ուղորտունիստական հայեցակետ: Նա միայն ծառայում է հոգուտ ժողովրդի թշնամիների, սոցիալիզմի թշնամիների: Լենինը և Ստալինը մեզ սովորեցնում են, թե մարդկանց գիտակցության վերափոխումը բավականաչափ յերկարատե և չափազանց դժվարին պրոցես է, վորը շարունակվելու յե յերկար ժամանակ, սոցիալիզմի անտեսական բազայի կառուցումից հետո ևս: Յերկարատե է նրա համար, վոր մարդկանց գիտակցությունը վորոշ չափով հետ է մնում նրանց կեցության փոփոխումից, բազմաթիվ միջոցներով կառչելով կյանքի կողմից անցած և ժխտված մարդկային վարքի և աշխարհայեցողության նորմաներին: Ճիշտ է արդյոք յենթադրել, թե հակա-ժողովրդական ամեն տեսակի ազդեցությունները կարելի յե անմիջապես, մեկ անգամից ընդմիշտ վերացնել: Իհարկե վոչ: Մարդկանց գիտակցության միջից կապիտալիզմի մնացորդները լիկվիդացիայի պրոցեսը անընդհատ և սխտեմատիկ դաստիարակչական աշխատանք է պահանջում:

Այն պատկերացումը, թե բոլոր ռեակցիոն մնացորդները, բոլոր հնադարյան նախապաշարմունքները մարդկային գիտակցության մեջ իրենք իրենց կվերանան, անդրադարձել է մասնավորապես յերկրի հակա-

կրօնական պրօպագանդայի դրուժյան վրա: Կարիք
չկա թագնելու, վոր մեր հասարակական կազմակեր-
պություններից և վոչ մեկը՝ արհմիությունները, կոմ-
յերիտիությունը, Մարտնչող անաստվածների Միու-
թյունը—այժմ հատուկ հակակրօնական ակտիվությամբ
աչքի չեն ընկնում:

Բայց դրա փոխարեն, լայն կերպով տարածվել են
ամենահիմար, անհիմն խոսակցություններ այն մասին,
«Թե մեզ մոտ հավատացյալներ չկան, աղոթում են իբր
թե միայն պառավները», «հակակրօնական պրօպա-
գանդան, իբր թե, անցած ետապ է, իր դարն անցած
գործ» և այլն:

Նույնիսկ Մարտնչող անաստվածների Միության
խորհուրդներն զբաղված են յերբեմն վոչ այնքան ա-
նաստվածության պրօպագանդայով, վորքան «աշխա-
տավորության միջից կրօնի մահացման ուսումնասի-
րությամբ», և այդ առթիվ սրտաշարժ հրճվանքով:

ԽՍՀՄ նոր սահմանադրության 124-րդ հոդվածին,
վորտեղ գրված է, թե «կրօնական պաշտամունքների
կատարման ազատությունը և հակակրօնական պրօպա-
գանդայի ազատությունը ճանաչվում է բոլոր քաղա-
քացիների համար», կոմյերիտական շատ կազմակեր-
պություններ և հակակրօնական ճակատի աշխատողներ
վերաբերվեցին յուրահատուկ կերպով, նրանից միան-
գամայն սխալ յեզրակացություններ հանեցին: Յեթե
կրօնական հավատալիքների ազատությունը ճանաչված
և որինականացված է խորհրդային Սահմանադրու-
թյամբ, նշանակում է, մտածում են նրանք, կարելի չե
«որինական» կարգով չզբաղվել հակակրօնական պրօ-
պագանդայով: Հակակրօնական պրօպագանդայի նը-
կատմամբ արհամարհական վերաբերմունքը նրանք
փոխարինեցին այդ գործով չզբաղվելու ուղղակի և
գիտակից հրաժարումով:

Հարկավոր է մինչև ուղն ու ծուծը չինովնիկ լինել,
և վոչ կոմունիստ, վորպեսզի այդպես մեկնաբանեն
Ստալինյան Սահմանադրությունը: Սակայն այդ փաստ

ե, յեվ նա հաստատվում է մեր մի շարք կոմյերիտական
կազմակերպությունների կողմից հակակրօնական դաս-
տիարակությունը լիովին անտեսելու փաստով:

Մինչդեռ տերտերները բոլորովին ել չեն մտածում
կծկել իրենց «հոգևոր գործունեյությունը»: Ընդհա-
կառակը՝ ակնհայտ են յեկեղեցական և աղանդավորա-
կան խավարամոլության աշխուժացման բոլոր նշան-
ները: Կրօնական պաշտամունքի աշխատողներն ոգու-
թում են մեր ամենափոքր հորանջից, վորպեսզի պահ-
պանեն իրենց ուժերը և վնասեն ժողովրդին:

Անվիճելի չե, վոր կրօնական պատկերացումները
մահանում են աշխատավորության մեջ: Անտարակույս
է և մի այլ բան.—կրօնը դեռևս պահպանվում է մարդ-
կանց նշանակալից մասի կենցաղում, գերազանցապես
գյուղում, կանանց մեջ, աղգային մարդերում: Դրանից
ոգտվում են յեկեղեցականները, վորոնք վերջերս կա-
տաղի աշխատանք են ծավալել իրենց «հոտը» և իրենց
յեկամուտները պահպանելու և ավելացնելու նպատա-
կով, (ի դեպ ասած՝ այդ յեկամուտներն այնքան ել
փոքր չեն, նրանք տարեկան հասնում են մի քանի
հարյուր միլիոն ուրբլու): Սահմանադրության մեջ
որինականացված «կրօնական պաշտամունքների կա-
տարման» ազատության դրոշի ներքո յեկեղեցական-
ներն ակտիվություն են հանդես բերում՝ ի վնաս ժո-
ղովրդի և սոցիալիստական շինարարության:

Կույրիչեվի մարդում տերտերները և նրանց արբան-
յակները սկսել են ակտիվ կամպանիա՝ աշխատա-
վորության կամքով առաջներում փակված յեկեղեցի-
ները բացելու համար: Մինչ հեղափոխությունն այս-
տեղ կային ավելի քան 2200 յեկեղեցիներ, աղոթա-
տներ, մզկիթներ: Հեղափոխության տարիներին ընթաց-
քում փակված են 1173: Չփակված յեկեղեցիներից գոր-
ծում եր փաստորեն 325: Այժմ մարդային կազմակեր-
պություններում ինդերազբեր են ստացվում՝ մոտավո-
րապես նույն քանակի յեկեղեցիներ բացելու համար:
Մարդում յեկեղեցիներ բացելու համար 1935 թվին յե-

դել ե 60 խնդրատու, իսկ 1936 թվին՝ 336: Հետաքրքիր է յեկեղեցիների բացման «նախանձախնդիրները» կերպարանքը: Կրասնոգվարդեյսկի գյուղում (Բոբսկիյ շրջան, Կուլբիչեվի մարզ) կրոնական «ակտիվը», վորը պահանջում է յեկեղեցին բացել, գլխավորվում է Սամարայի նախկին նահանգապետ Բրինչանինովի բարեկամուհի վաճառական Խրիստի կողմից, վորը վերջերս է վերադարձել աքսորից:

Կան փաստեր, յերբ մարդիկ, վորոնք նախկինում կտրել են իրենց կապերը կրոնից, յեկեղեցականների ազդեցության տակ նորից կրոնական ծեսեր են կատարում: Ամոթ կոմյերիտական տեղական կադմակերպություններին. այդ մարդկանց մեջ կան նաև կոմյերիտ-միության վորոշ անդամներ: Կուլբիչեի մարզի Բազատովո շրջանում, կոմյերիտական Տուրկինը պսակվել է յեկեղեցում և վորպես կնքահայր կնքել է յեղբոր յերեխային: Ուլյանովսկի շրջանում կոմյերիտական Կուլնեցովը կատարել է կրոնական տոները: Պենզայում և Ուլյանովսկում տեխնիկումի ուսանողներից և դպրոցների աշակերտներից վոմանք յերգում են յեկեղեցական յերգեցիկ խմբերում: Արդյոք յեզակի՞ յեն այդ փաստերը: Դժբախտաբար՝ վո՛չ:

Յեկեղեցականները և աղանդավորները, քաղաքավարի արտահայտված՝ այդ կատարյալ չարխատանքը վերստեղծում են այժմ կրոնական շանտաժի կլասիկ ձևերը: Նորից մի շարք տեղերում սկսել են «վերանորոգվել» սրբապատկերները, առաջ են յեկել ուխտագնացություններ դեպի «սրբազան աղբյուրները», սկսել են «հրաշքով բուժվել» հիվանդները: Մերձվուլգյան շրջաններից մեկում հավատամուրները յեկեղեցի յեն բերել հաղորդելու մի «դիվահար» կնոջ: Յերբ նրան իբր թե «ուժով» հաղորդել են, նա հինգ բոպեյից հետո դարձել է նորմալ:

Հեռավոր անկյուններում նորից են ծնունդ առել խավարամուրների կողմից տարածված այն վայրենիլուրերը յերկրագնդի վրա մոլորակ ընկնելու (!) մա-

սին, «պատժող կրակի» մասին, վորը շուտով թափվելու յե յերկնքից և այլ դատարկությունների մասին:

Ազգաբնակչության հետամնաց խավերին թմրեցնելու համար, յեկեղեցականները չեն խորշում վոչ մի միջոցից: Թե միջնադարյան կրոնամուրթյան ինչպիսի սահմանների յեն հասնում այդ մարդիկ, յերեվում է հետեվյալ հրեշավոր դեպքից.—Իվանովյան մարզի Յակովլևսկի վուշի կոմբինատի Ռոգաչեվի Փարբիկայում աշխատում եր 26 տարեկան Ագնիա Տիմոնինան: Մի ժամանակ նա գտնվում եր տեղական աղանդավորների ազդեցության տակ: Խզելով իր կապերը նրանցից՝ Տիմոնինան տարվեց ստախանովյան շարժումով և շուտով դարձավ որինակելի բանվորուհի: Սակայն աղանդավորները նրան հանդիստ չթողին: Նրանք սկսեցին ներշնչել Տիմոնինային, թե նա «ծախվել և պարզև ստանալու համար»: Սպառնալիքների, անեծքների, շանտաժի ոգնությամբ համոզելին նրան «քավել իր մեղքերը»՝ վերջ տալով իր կյանքին ինքնասպանությամբ:

Այստեղ եյապես վոչ թե ինքնասպանություն և, այլ Փարբիկայի լավագույն բանվորուհու իսկական սպանություն «քրիստոսասեր յեղբայրների կողմից»:

Ի՞նչպես կարելի յե նմանորինակ յերեվութների գոյության դեպքում խաղաղ և անվրդով պնդել, թե մեզ մոտ իբր թե միայն պառավներն են աղութանում: Քաղաքական կուլբերը թշնամիներից պակաս փտանդավոր չեն մեզ համար: Ուրիշ ինչով, յեթե վոչ քաղաքական կուրությամբ և թշնամիների նկատմամբ ունեցած հաշտվողականությամբ կարելի յե բացատրել իվանովի մարզի աշխատողների վարմունքը, վորոնք դադարեցրել են պայքարը կրոնի դեմ:

Յեկեղեցականներն իրենց վնասակար, իսկ հաճախ ել հակախորհրդային պրակտիկական փորձում են չղարչել խորհրդային իշխանության նկատմամբ լոյալության նուրբ քաղաքականությամբ և նույնիսկ սոցիալիստա-

կան շինարարության հանդեպ «համակրանքի» արտահայտութեամբ: Այսպիսի քաղաքականութեան պատճառները պարզ են: Խորհրդային հասարակութեան մեջ, վերջին տարիներին շահագործող դասակարգերը, և վերջին քաղաքացիները և ազատ աշխատավորները, յեկեղեցականները ստիպւած են գործել աշխատավորների մեջ: Խորհրդային իշխանութեան հեղինակութեան անխափառելիութեան պայմաններում դժուար է գնալ աշխատավորների մոտ (թեկնով նույնիսկ ժողովրդի ամենահետամնաց, չբուսացող միջնախաւերի մոտ) բացահայտ հակահեղափոխական քարոզում: Նշանակում է պետք է քողարկւել, պետք է թաքնւել խորհրդային քողի տակ, յերկերեսանիութուն անել և դրա միջոցով դժուարացնել ժողովրդի կոմունիստական բուսացողութունը և նրա վերջնական ազատագրումը կոմունիստական ցանցերից: Մեզ մոտ յեկեղեցին բաժանւած է պետութեանից: Այժմ յեկեղեցականները փորձեր են անում ներառել պետութեան մեջ: Նույն պրոփոկացիոն նպատակներով սոցիալիզմի հաջողութեանները պետք է բացատրել «աստվածային դրոշմով», բոլշեւիկների բոլոր հաջողութեանները վերագրել... աստվածային բարյացակամութեան (!):

Չափազանց ակներև են այդ տեսակետից վրձն ավագները Ա. Կ. Պոսպելովի քարոզի «թեզիսները» «հեղափոխութունը և խորհրդային իշխանութեանը հավատքի լույսի տակ» թեմայով:

Ահա թե ինչ է շարադրած այդ բովանդակազուրկ նուրբ և խորամանկորեն կազմւած քարոզում.

«Թեզիս առաջին:— Խորհրդային իշխանութեանը, վերջին տարիներին ունի մեր յերկրում ժողովրդի փաստական համաձայնութեամբ կամ ճանաչումով, վոչ միայն որինական, այլև աստվածաշնորհ իշխանութեան է»:

Սիրալիքութեան համար շնորհակալութուն, բայց խորհրդային իշխանութեանն այդպիսի ճանաչման կարիքը չի զգում: Այդ տրյուկի վորպես թե աշխատավոր-

ութեան աստվածաշնորհ իշխանութեան մասին տրյուկի կարիքն են զգում իրենք՝ յեկեղեցականները: Նրանք փորձում են խաղալ մեր պետութեան հեղինակութեան հետ, վորպեսզի «աստվածիկը», խցկեն վորպես... գերագույն հովանավորողի, վորին պարտական են խորհրդային աշխատավորներն իրենց կյանքի յերջանկով յամբ՝ սոցիալիստական պայմաններում:

Ավագները Պոսպելովը հենց ուղղակի այդպես ելնշում է քարոզում. «Խորհրդային իրավակարգի հաջողութեանները, աստու նկատմամբ ունեցած բարյացակամութեան ցուցանիշն են»:

Շնորհակալ լինել յերջանիկ կյանքի համար, վոր իր հետ բերել է խորհրդային իրավակարգը, ըստ Պոսպելովի հարկավոր է վոչ թե ժողովրդական իշխանութեանից, վոչ թե բոլշեւիկների կուսակցութեանից, այլ... աստուց: Այդ ամենը իբր թե տեղի յե ունեցել նրա «սուրբ կամքով», և նախկին իրավակարգն ել կործանւեց նույնպես այն պատճառով, վոր դա «հաճելի յեր աստուն»:

«Հին իրավակարգի տապալումը, նրա ներքին անճշտութեան և անկայունութեան հետեւանքով հանդիսացաւ, — գրում է ավագները Պոսպելովը պատմական անհրաժեշտութեան, վորը, մի խոսքով, կանխատեսած էր աստու խոսքով և նախատեսւած՝ մարդկային մտքով»: Մարքսը և Ենգելսը, Լենինը և Ստալինը իբրև թե նախատեսել էին, իսկ աստված կանխագուշակել էր: Ճարպիկ խաղ: Կրօնը և խորհրդային իշխանութեանը համատեղել, պահպանել կործանվող կրօնը, վորը վարկաբեկւած է իր բոլոր հիմունքներով, սոցիալիզմի հաջողութեանները... ոգնութեամբ, — այդ է յեկեղեցականների նորագույն յերկերեսանի խաղախաւութեանը: Այդ խաղախաւութեանը համապատասխանում է նրանց հեռուն գնացող ծրագրերին. «խաղաղ կերպով», թեթև աղմկի տակ, «աստվածիկի» հետ միասին խցկւել սոցիալիզմի մեջ, պահպանել իրենց «հոտը» և իրենց յեկամութեանը:

Միայն դափնիներ զրա նիրհած «մարտնչող» ա-

նաստվածները և վորոշ կոմյերիտական կազմակերպութ-
յունների պատուհաս ղեկավարներն են, վոր չեն ու-
ղում տեսնել մասսաների կոմունիստական դաստիարա-
կությանն եյական վնաս հասցնող տերտերների, ու
կսենձների, բարիների վնասաբեր բոլոր նենգություն-
ները:

Զե՞ վոր փաստ է, վոր նույնիսկ քաղաքային բան-
վոր յերիտասարդության վորոշ մասը դեռ գտնվում է
կրոնական նախապաշարումների գերության մեջ:

Զե՞ վոր փաստ է, վոր մայրաքաղաքի մի շարք մեր-
ձակա չըջանների գյուղերում վոչ միայն տոնում են
այսպես կոչված «յերկոտասան» տոները այլ և ամեն
տեսակի այլ տոներ, այդ որերը հավերժացնելով հար-
բեցողությամբ և աուր ու դմփոցով:

Ծխակաւտարությունների վիճակագրությունն ան-
չեղորեն ցույց է տալիս, վոր տարեց-տարի պակասում
է այն մարդկանց թիվը, վորոնք ցանկանում են իրենց
փողերով լցնել տերտերների զբաւանները: Բայց կան
դեռ վոչ պակաս թվով հակառակ որինակներ: Բինգի
ավանում (Սվերգլովսկի մարզ, Կիրովագրադի շրջան)
1936 թվի փետրվար ամսում տեղական յեկեղեցում
կատարվել է 18 մկրտություն, մարտ ամսում՝ 12,
ապրիլ ամսում՝ 13, մայիսին՝ 17: Փետրվար ամսում
կատարվել է 7 թաղում, մարտին՝ 16, ապրիլին՝ 11,
մայիսին՝ 9: Այդ գյուղի բնակիչները վոսկու արգյու-
նաբերության բանվորներ են: Վերցնենք մի այլ տիպի
որինակ: Սանսկի գյուղում, վորտեղ գտնվում է Ստա-
լինի անվան կոլտնտեսությունը, (Մոսկվայի մարզի
Յեֆրեմովսկի շրջանի լավագույն կոլտնտեսությունն է
և վորը բաձրացված է մարզի պատվո տախտակին)
կրոնական ծեսերով կատարվող մկրտությունը, ամուս-
նությունն ու թաղումը մշտական յերեվոյթ են: 1935
թվին յեղել է 51 ամուսնություն, վորից 37-ը յեկեղե-
ցական, 1936 թվականին 4 ամուսն ընթացքում 26
ամուսնություններից 21-ը՝ յեկեղեցական:

Կրոնական կենցաղային մնացորդները շարունա-

կում են վնաս բերել կուլտուրայի աճմանը և ժողովրդ-
դական տնտեսությանն աչնաեղ, վորտեղ աչքաթող է
արված հակակրոնական աշխատանքը: Նախապաշա-
րումները, վորոնք վոչ թե ուղղակի վատում են գիտակ-
ցության մեջ, ինչպես այդ թվում է մի քանի պարզա-
միտների, այլ իրենց զգալ են տալիս և ներխուժում
են մեր կյանքի մեջ ինչպես չարիք, խանգարում են կոլ-
տնտեսականներին հասկանալու ագրոտեխնիկայի նշա-
նակությունը, խանգարում են բանվորներին ծավալե-
լու ստախանովյան շարժումը, խանգարում են յերի-
տասարդության գիտակցությանն ու կուլտուրայի աճ-
մանը, խանգարում են յերկրի պաշտպանությունն ու-
ժեղացնելու:

Հապա ո՞ւր է այն հիմքը, վորով իբր թե կարելի
յե կրոնի դեմ մղվող պայքարը համարել «հնացած
գործ»:

Անհեթեթ բան է այն պատկերացումը, թե ԽՍՀՄ-ի
Սահմանադրության մեջ կրոնական պաշտամունքներ
կատարելու ազատության վերաբերյալ խոսքերը հան-
դիսանում են հակակրոնական պրոպագանդան զաղա-
րեցնելու նշան: Մի՞թե այդ որենքը վորեւէ բան փոխում
է դեպի կրոնը կոմունիստների ունեցած վերաբերմուն-
քի մեջ: Մի՞թե մինչև այժմ խորհրդային իշխանու-
թյունը յերբեւէ և վորեւէ մեկին արգելել է հավատալ
աստծուն ու յեկեղեցի հաճախել:

ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրությունը, սոցիա-
լիստական կյանքի Հիմնական Որենքը չի նշանակում
կոմունիզմի պրոպագանդայի վերացում կամ թուլա-
ցում, այլ ընդհակառակը, նախորոշում է այդ պրոպա-
գանդայի ուժեղացումը՝ մասնավորապես հակակրո-
նական ճակատում:

Վորոնք են հակակրոնական պրոպագանդայի այն
խնդիրները, վոր պարտավոր է մղել կոմյերիտմիու-
թյունը: Դրանք սպառիչ պարզությամբ թելադրված
են Համ.ԼԿՅՅՄ-ի ծրագրում: Այնտեղ ասված է.---

«Համ.ԼԿՅՅՄ-ը համբերատարությամբ պարզա-

բանում ե յերիտասարդությանը սնտրիապաշտության և կրոնական նախապաշարումների վնասը, այդ նպատակով կազմակերպելով հատուկ խմբակներ և դասախոսություններ հակակրոնական պրոպագանդայի շուրջը»:

Մեզանում ծրագրի սկզբնական նախագծում, ինչպես հայտնի յե, գրած էր. «Կոմյերիտմիությունը վճռականորեն, անխնա կերպով պայքարում է կրոնական նախապաշարումների դեմ»: ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆՆ ասաց մեզ, վոր խնդիրը «վճռականորեն», «անդարձ» և այլ բառերի մեջ չե: Հարկավոր է յերիտասարդությանը համբերատարությամբ պարզարանել կրոնական սնտրիապաշտության և կրոնական նախապաշարումների վնասը, հարկավոր է յերիտասարդության մեջ միայակ գիտական մատերիալիստական աշխարհայացքի պրոպագանդա մղել:

Ստալինյան այդ ցուցումները վորոշում են կոմյերիտմիության ձեռնարկումները հակակրոնական դատարարակության ասպարեզում: Պետք է հաստատուպես հիշել, վոր մեզ հարկավոր չեն այնպիսի տարերային նիհիլիստներ, վորոնք միայն գիտեն գոռալ՝ «կորչեն, կորչեն վանականները, կորչեն, կորչեն տերտերները», այլ մեզ հարկավոր են համոզված անաստվածներ, գրադետ մարդիկ, վորոնք մատերիալիստական կայուն աշխարհայացք են մշակել:

Վորքան հասարակ բան է՝ սարքել ճոխ «կոմյերիտական ծնունդ», ամպագոռգոռ սպառնալիքներով. — «Մենք յերկինք կբարձրանանք, կվռնդենք բոլոր աստվածներին»: Վորքան բարդ բան է յերիտասարդության ուղեղները համբերատարությամբ և համառորեն մաքրել կրոնական ամեն տեսակի բերովի բորբոսից, ամենորյա և գործուն պրոպագանդա մղել մատերիալիստական աշխարհայացքի շուրջը, մանրակրկիտ կերպով բացատրել, թե կոմունիզմը և կրոնն անհամատեղելի յեն: Միայն հենց այդպես էլ պետք է ծավալել հակակրոնական աշխատանքը: Ինչ վերաբե-

րում է «կոմյերիտական ծնունդներին» և կամպանիոն քնույթի ամեն տեսակ պոթիկումներին, — դրանք անընդունելի և վնասակար են մեր գործի համար: Բացի հավատացյալների զգացմունքները վիրավորելուց, նրանք վոչինչ չեն տալիս: Կրոնական նախապաշարումները կարելի յե վերացնել միայն ուշադիր, զգույշ բացատրական աշխատանքով և վոչ թե խուլիզանական արարքներով և վարչարարությամբ: Անվիճելիորեն վնասակար և սխալ է բոլոր հավատացյալներին «խորհրդային իշխանության թշնամիներ» հայտարարելը:

Կոմունիստական դաստիարակության խնդիրները պահանջում են, վորպեսզի անաստվածության պրոպագանդան իսկապես մղվի լայն չափով: Այդ նշանակում է՝ առաջին հերթին կովել բոլոր հաշտվողական տարրերի դեմ, վորոնք հանգստացել են գալինիների վրա և շարունակում են անտեսել իրականությունը, համաձայնողաբար վերաբերվել յեկեղեցականների բոլոր վոտնձգություններին: Կարիք կա՞ ավելացնելու, վոր այդ մարդիկ մինչև այժմ ինչպես հարկն է չեն հասկացել այն հիմնական խնդիրը, վոր դրված է յենինյան կոմյերիտմիության առաջ:

Ահա մի մասնակի որինակ, թե ինչպես մի քանի կոմյերիտական աշխատողներ անվողնաչար—հաշտվողական վերաբերմունք են ցույց տալիս գեպի հակակրոնական պրոպագանդան. ամբողջ 1936 թ. ընթացքում կոմյերիտական վոչ մի ժուռնալ չատ թե քիչ յսելացի հոդված չի տպել այդ հարցերի շուրջը: Ո՞վ է թույլ տվել ձեզ, ընկեր խմբագիրներ, անտեսել անաստվածության պրոպագանդան:

Անուհետև հարկավոր է աջակցել, վորպեսզի քնից զարթնի ԽՍՀՄ Մարտնչող անաստվածների Միությունը: Թող այդ միությանը պատկանող ընկերները չընեղան ինձանից, սակայն նրանք բոլորովին կորցրել են մարտունակությունը: Անգամ նրանց կենտրոնական տպագիր որդան «Անտիրեկիդիզնիկը», վորը ջանադիր կերպով արձանագրում է աշխատանքի թուլա-


ցումը հակակրօնական ճակատում, — ամենելին չի
փայլում մարտնչողականությամբ և շատ քիչ է ոգնում
ստորին պրոպագանդիստներին:

Հետեւանքն այն է լինում, վոր նույնիսկ այնտեղ,
ուր հակակրօնական պրոպագանդիստները փորձում են
մի կերպ աշխատել, նրանք հետ են մնում ժամանակի
պահանջներից և նրանց աշխատանքն ապարդյուն է
անցնում:

Տեղերում այժմ չմարտնչող անաստվածների մի-
ության աշխատանքի աշխուժացումը շատ բաներով
կախված է կոմյերիտական կազմակերպություններից:

Մեզանում չպիտի լինի վոչ մի չըջան և վոչ մի
սկզբնական կազմակերպություն, վորը լայն ու բովան-
դակալից հակակրօնական աշխատանք չծավալի:

Հարկավոր է անաստվածության պրոպագանդա
մղել մեր յերկրի ամբողջ յերիտասարդության մեջ:
Հարկավոր է յեկեղեցականներից խլել նրանց ամբողջ
յերիտասարդ հոտը: ԽՍՀՄ յերիտասարդությունը
պետք է լինի իրոք կուլտուրական, իսկապես լուսա-
վորված և ուրեմն ամբողջությամբ, առանց մնացորդի,
միանգամայն անկրօն: Անհամատեղելի յե լինել առա-
ջավոր խորհրդային յերիտասարդ մարդ և միջովնույն
ժամանակ՝ կրօնական:



Թարգմանեցին և կազմեցին՝ Մ. ԱՆՏՈՆՅԱՆ

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Պատ. խմբագիր՝ Գ. ԳԱՅԱՆՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Սրբադրել՝ Մ. ՄԱՐՏԻԿՅԱՆ

Գլավխիտի լիազոր №—9324, Հրատ. 4376

Պատվեր 1294, Տիրաժ 3000

Թուղթ 62×94, Տպագր. 4 մամ.

Մեկ մամ. 30720 նիշ. Հեղինակային 4,5 մամ.

Հանձնված և արտադրության 3. XII. 1937 թ.

Ստորագրված է տպագրության 26. XII. 1937 թ.

Գինը՝ 1—50 կոպ.

Պետհրատի տպարան, Յերեվան, Լենինի փող. 65

30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՐԺԱՐԱՆ
ԱԲԱԶ ԿԱՐԴԱՆ ԵՐԵՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0937710

31. ДЕК. 1937
ФБС 1 П. 50 Ч.

604

11

28120

Антирелигиозная пропаганда
в нынешних условиях
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.